




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4617

281.69

1881

u-974


1887

~~1100 a.~~

~~134~~ ~~140~~

AF 87 pmd I.

45



2010

2001

28169
Խ-91 Կ
պր.

Խ Ր Ի Մ Ե Ա Ն


102



(ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանդերձ լուսանկար պատկերով



Գ Ր Ե Ց

ՑԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՍԵԱՆՑ



1887

Թ Ի Ֆ Լ Ի Ա



Տպարան Մովսես Վարդանյանի

Տ
456-51

1005
21392

Доз. Пенз. Тифлисъ, 1887 г. 29-го Октября.

Тип. М. Вартанянцъ, Тройц. пер. д. № 11.

Սոյն գրուածքից հատուածներ արտատպել դասագրքերի մէջ կամ գրքոյկն ամբողջովին թարգմանել որեւէ լեզուով — վերապահուած է հեղինակին:

Տ. Փ.

21864-60

2012

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ա.



ՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ անունը, սիրելի ընթերցող, դու շատ ես լսել: Դու լսել ես, որ այդ Տաճկաստանի եպիսկոպոսը մի պահապան հրեշտակ է իր ժողովրդի համար: Դու լսել ես, որ նա Պատրիարք էր մի ժամանակ Կոստանդնուպոլսում: Դու լսել ես, որ վերջին Ռուս — Թիւրքական պատերազմին նա մի պտոյտ արեց Եւրոպայում: Դու լսել ես վերջապէս, որ նա մօտ երկու տարի առաջ Թիւրք կառաւարութեան հրամանով Կ. Պօլիս տարուեցաւ եւ այժմ արգելուած է նրան իւր սիրած գաւառները ոտք կոխել:

Սյս ամէնը, ընթերցող, յուսամ թէ լսել ես, բայց չեմ կարծում, որ շատ տեղեկութիւն ունենաս այդ մեծ հայրենասէրի եւ առաքինի հոգեւորականի ժողովրդականութեան, բնաւորութեան, սովորութեանց ու մասնաւոր կենցաղավարութեան մասին: Իսկ այդ բաները՝ գիտեմ որ շատ հետաքրքիր են քեզ, ուստի եւ թող իմ պարտքս լինի մատուցանել քեզ այդ ծառայութիւնը, զի ես բաղդ եմ ունեցել նրա մօտիկ ծանօթներէից մէկը լինելու վանայ մէջ (*):

(*) Սոյն գրքոյկը կազմուած է մեր հասարակ ժողովրդի համար: Եթէ սա ընդունելութիւն գտնէ, միտք ունիմ հրատարակել նրա համար էթանագին գրուածքներ, նիւթ առնելով Տաճկաստանի և Ռուսաստանի Հայոց կեանքից:

Տ. Փ.

Սկսենք Խրիմեան Հայրիկի դէմքից: Ընթերցող, դու գիտես, որ ոչինչ կատարեալ չէ այս անցաւոր ու փուճ աշխարհում: . . թողնենք հազարաւոր օրինակները եւ շատանանք մէկով: Քանի անգամ «ան» եւ քաշել, թէ ինչու ֆլան մարդը այնչափ խելօք, ուսեալ է, բայց չունի նրա համապատասխան սիրտ, խիղճ, մարդկութիւն: Ո՛րչափ ցաւ եւ զգացել, դրա հակառակ, երբ տեսել ես շատ բարի ու ազնիւ մարդիկ, բայց զուրկ խելքից ու խոհեմութիւնից: Քանի քանի՝ գեղեցիկներ՝ թէ՛ մարդ՝ թէ՛ կին՝ հրապուրել, յափշտակել են քեզ իրենց սիրուն աչքունքով, երեսի ներդաշնակ ու զմայլեցուցիչ գծերով, «Աստուծոյ հոգի կայ սրանց երեսներին» — մտածել ես դու, բայց չէ անցել միջանի օր ու դու զգուանքով աղատել ես նրանցից օձիքդ եւ նղուխել նրանց անաղներութիւնը, կեղտոտութիւնը, տգիտութիւնն ու յիմարութիւնը. . . Ուրեմն մի կողմից խելք՝ առանց ազնւութեան ու գեղեցկութեան, միւս կողմից ազնւութիւն՝ առանց գեղեցկութեան ու իմաստութեան, երրորդ կողմից գեղեցկութիւն, սիրունութիւն, բայց առանց հոգու եւ բանականութեան. . . Բայց կայ նոյնպէս մարդոց մի չորրորդ տեսակը. . . եւ ջուրն եկել, տարել է այդ թշուառականներին: Պրանք քո այն ծանօթներն են, որոնց մէջ դու բնաւ մի արժանիք չես նկատել եւ որոնք ապրում են մեր մէջ ոչ իբրեւ մարդ, այլ — մեղայ Սատուծոյ — իբրեւ անբան ու գաղան. . . Ի՞նչ տեսնում ես այս ամէնը, սիրտդ կսկծում է մարդոց պատուհասների, բնութեան խաղերի վրայ խոկալով եւ ձանձրանում, յուսահատուած եւ աշխարհից. . .

— Համբերիր, ճիւ սրտնեղ արարած, — լսում ես դու մի անծանօթ ձայն եւ մի անտեսանելի ձեռք բռնում է պինդ քո ձեռքից:

Յետ ես նայում եւ ինչ տեսնում: — Ի՞նչ տեսնում ես քո առաջ մի խումբ մարդիկ, որ նայում են քեզ որպէս մարմնացեալ ազնւութիւն, բարութիւն, կարեկցութիւն, խելք,

տաղանդ, հանճար, գեղեցկութիւն, այո՛, մի հրեշտակային գեղեցկութիւն: Պրանք, այդ կատարեալ մարդիկը, իմ սիրելի ընթերցող, մեր ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ-ներն են: Պրանք կան եւ ապրում են թէ՛ մեր աշխարհական եւ թէ՛ հոգեւորական դասերում: Պրանք մեզ պէս սովորական մահկանացուներ չեն:

Պրանք զգում են քարշ գալ մեր ցեխի, թուլութեանց ու ապիկարութեանց մէջ: Կարծես մի անտեսանելի ոյժ պահում է դրանց եթերի մէջ այնպէս, որ ոտները մեր կեղտոտ գետնին չը դիպցնեն, որպէսզի աւելի բարձր լինելով, դիտելի լինեն մեր ամէնիս աչքերին: Որպէս զի աւելի պարզ ու որոշ տեսնելով նրանց ամբողջ էութիւնը, հետեւող լինինք նրանց գործոց, բնաւորութեան ու վարքին եւ ջնջենք Հայ ճակատից այն թանձր մուրը, որ ժամանակն ու հանգամանքները դրոշմել են այնտեղ: Եւ այդ է թերեւս Ամենակարողի անհասանելի կամքը, որ չէ զրկել իր ժողովրդին այդ բաղմաշխատ պահապան հրեշտակներից:

Իսկով հիմայ մեզ զբաղեցնող անձին, իսկական Խրիմեան Հայրիկին եւ նախկին Պատրիարք՝ Սկրտիչ արքեպիսկոպոսին — նա իր վեհ ազնւութեան, հանճարի ու տաղանդի հետ օժտուած է նա եւ մի այնպիսի մարմնական գեղեցկութեամբ ու վայելչակազմութեամբ, որ շատ հազուադէպ է մարդոց մէջ: Խրիմեան Հայրիկը աշխարհի ա մե ն ա գ ե դ ե ց ի կ տղամարդերից մէկն է: Բնութիւնը չէ զլացել շռայլել իր բոլոր ճարտարարուեստ ձիրքերը այդ հսկայի դէմքը կոփելու, ձեւելու, նկարելու ու քանդակելու համար: Լոյսը թափել է նրա վրայ իր գրաւիչ գոյները՝ նրանից մի հրաշակերտ դուրս բերելու համար: Մեր նախահայր Տորքը տուել է նրան իր վիթխարի հասակն ու ոյժը՝ իր սերունդը չը սպառելու համար: Աստուած փչել է նրա աչքերին իր օրհնեալ հոգին, աշխարհի ուշքը դէպի նա ձգելու համար: Եւ օրհնեալ է Աստուած:

Բայց ցաւալին ու աւաղելին այս է, ընթերցող, որ դա-
րուա լուսանկարչութիւնը, ֆօտոգրաֆիան անզօր ու ապիկար
է եղել Խրիմեան Հայրիկի դէմքը թղթի վրայ դրոշմելու: Նրա
լուսանկար պատկերները բնաւ նման չեն իսկականին. Հայրիկի
ստուերն են միայն նրանք, նրա վէճ դէմքի յանդուգն աղ-
ճատումն են նրանք: Ես բողբոջում եմ լուսանկարների այդ-
անշնորհքութեան դէմ ու պահանջում կատարելագործել ի-
րենց գործիքները: Բայց մինչեւ որ նրանք ընկնեն իրենց պա-
րագաները շտկելու յետեւից, արի՛, ընթերցող, գնանք միասին
Վան ու մոնենք Հայրիկի սեպհական տունը: Վնաս չունի
թէ նա բացակայ է իր սենեակից. այնտեղ մենք կը գտնենք
մի ուրիշ Հայրիկ, յար եւ նման իսկականին, ճիշտ մի կըտ-
րուած ձմերուկ: Այդ երկրորդ Հայրիկը պատից կախուած
մի պատկեր է, որ ներկայացնում է իսկական մեծութեամբ
Խրիմեանի կիսարձանը (բիւստը), այսինքն գլխից մինչեւ կրծ-
քի տակը: Նա նկարուած է հասարակ ձեռքով եւ չունի իր
վրայ ուրիշ ներկ, բացի սեւ մելանից: Կը հաւատաս, ըն-
թերցող, որ այնքան նմանութիւն, արտայայտութիւն ու կեն-
դանի հոգի կայ այդ պատկերի մէջ, որ յանկարծ ու անու-
շաղիւր այդ սենեակը մոտեցնով, դիմում ես դէպի այդ թղթ-
թի մարդը ու պատրաստում նրա «աջն առնելու»...

Ո՛վ է շինել այդ հրաշակերտը:

Լսիր ընթերցող: Խնայէս ամէն տեղ, այնպէս էլ Կ. Պօլսում,
Խրիմեան Հայրիկը, իր խոշոր բարեմասնութիւններով, դար-
ձել է միշտ երկրպագութեան առարկայ բոլոր զգայուն ու
ազնիւ մարդոց: Նա խենթի պէս պաշտուել է մանաւանդ
նորաստի երիտասարդների ու օրիորդների կողմից, որոնց սիր-
տը կայտառ, զգացումները թարմ ու վսեմ են լինում: Նրա ան-
զուգական գեղեցկութիւնը չէր կարող աւելի խոր արմատ-
ներ չը ձգել մանաւանդ իգական սեռի ներկայացուցիչների մէջ
ու չը գրգռել Բիւզանդիոնի աշխոյժ աղջիկների վարվուռն,

սուրբ ու պլատօնական սէրը: Ուրեմն հարիւրաւոր պարկեշ-
տասուն, ազնուատոհմ ու գիտուն օրիորդներ պատրաստ էին
իրենց գլուխը դնել Հայրիկի մէկ եղունգի համար: Եւ այդ
սիրահարութիւնը կրում էր այն Աստուածային կնիքը, որով
կապուած են այսօր մեր եկեղեցին ու Տէր Յիսուս Քրիստոսը,
որոնք, այսինքն եկեղեցին ու Քրիստոսը «հարս ու փեսայ»
են համարում իրար:

Այդպիսի յարգելի օրիորդներից մէկը, որ բաւականին
վարժ է լինում նկարչութեան մէջ, կամենում է անպատճառ
մի մեծ նուէր տալ իր սիրոյ առարկային: Բայց որովհետեւ
նա չէ գտնում աշխարհի մէջ ոչինչ այնքան թանկ ու ազնիւ
պարգեւացու, որչափ ինքը Հայրիկն է, — նա վճռում է նուի-
րել այդ չքնաղ առարկան, այսինքն Հայրիկը, նոյն իսկ իրեն,
Խրիմեան Հայրիկին... Մի զարմանար, ընթերցող: Օրիորդը
տաղանդաւոր էր եւ ներշնչուած մի ինչոր անհասկանալի զօ-
րութեամբ: Նա առնում է իր ձեռքը մի երկաթի հասարակ
գրիչ ու թանաք, նստում է իր սիրածի դիմաց ու շունչ
փչում այդ թղթի կտորին... Պատկերը ներկայացնում է
Խրիմեանին նստած դիրքով (թէեւ մինչեւ կուրծք), բաց ու
հերարձակ գլխով: Երեւում է, որ այդ միջոցին նա մտիկ է
անում մէկ խօսող մարդու ու թափանցում իր քնքոյշ աչ-
քերով նրա ուղեղում: Այդ վսեմ աչքերի մէջ կարելի է կար-
դալ մտքերի մի անտակ ծով, որ չունի նոյնպէս ծայր ու վերջ:
Մի վսեմ զուարթութիւն փայլում է նրա ճակատին, դէմքն
համայն շողշողում է Ժպտով, ծամերն ու մօրուքը նոր են
սպիտակին տալիս: Գոհ է մնում օրիորդը իր արտադրութեամբ
եւ մատուցանում այդ անգին ու միակ առարկան իր պաշ-
տելին: Պատկերը քաշուած է մօտ 15 տարի սրանից առաջ,
Խրիմեանի պատրիարքութեան օրով եւ ցայսօր յարգանքը պա-
հում է նրա առանձնասենեակում: Բայց ի՛նչ պատկեր. հրա-
շակերտ է, ասում եմ: Եւ հրաշակերտ է, որովհետեւ կա-

տարեւապէս նման է Հայրիկին: Եւ սէրն է որ գործել է տա-
լիս մարդոց շատ հրաշքներ: Մանաւանդ Հայ աղջկայ բոցա-
վառ սէրը:

Յուսով եմ, թէ այդ նկարը կ'դառնայ ժամանակով մեր
պատկառելի հնութիւններից մէկը:

Կարծում եմ, ընթերցողը բաւական գաղափար ստացաւ
Հայրիկի արտաքին տեսքի վրայ:—Նա մի յաղթանդամ, բար-
ձրահասակ, լեցուն երեսով ու ալեխառն մօրուքով մարդ է:
Սչքերը հեղ են ու վսեմ, խոշոր ու թուխ, փայլուն ու քն-
քոյշ: Սպիտակ երեսը երբեմն փոքր ինչ կարմրին է տալիս,
բայց մի անշմարելի դալուկ ծածանում է անսպառ նրա դէմ-
քի վրայ: Ո՛հ, Հայրիկի ամենօրեայ թախիծն է այն: Այդ
թախծութիւնը սովորական տեսակից չէ. նա յատուկ է աշ-
խարհի հազուագիւտ մարդոց մի փոքրիկ խմբին: Եւ այդ
թախիծն է, որ այնքան գեղեցկութիւն ու վսեմութիւն է տա-
լիս Հայրիկի մշտագոռարթ դէմքին: Լուրջ բաների վրայ խօ-
սելիս, նա սովորութիւն ունի թեթեւ կերպով կոպերը իջեց-
նել բիբերին ու էլի յետ բարձրացնել: Եւ այդ էլ պատճա-
ռում է դիտողին չը գիտեմ մի ինչ որ անբացատրելի հրա-
պոյր: Վերջապէս նրա դէմքի ամբողջութիւնը այնպիսի մի
սպաւորութիւն է թողնում քեզ վրայ, որ դու կը համաձայ-
նէիր տաս տարի առանց հացի ու ջրի մնալ, միայն թէ նրա
երեսից աչքերը չը հեռացնէիր:

Ուր որ Հայրիկը նստած լինի, կուզէ թող հազար մար-
դու մէջ լինի, ամէնի հայեացքը դէպի նա են ուղղւում: Կար-
ծես նա մի արեգակ է, որ ծածկում է մեր աչքից երկնքի
միւս լուսաւորները:

Երբ նա անցնում է փողոցում, այնպիսի մի փայլ է տա-
լիս իր հասակով, քալուածքով ու դէմքով ամբողջ հրապա-
րակին, որ ծանօթ թէ անծանօթ, հայ թէ տաճիկ, քիւրդ
թէ եղրդի ականայ կանգնում, քար են կտրում իրենց ճա-

նապարհին, որպէս զի փոքր ինչ աւելի զմայլին ու հրճուին
այդ պատկառելի անցորդով:

Տայ Սատուած, ընթերցող, որ ամէնքդ էլ արժանանաք
այդ մեծ մարդու տեսութեան:

Բ.

ՀԱՅՐԻԿ. . . Այս անունը բաւական է արդէն հասկա-
նալու, թէ ինչ սրտի ու ծնողական գորովի տէր է Խրիմեա-
նը իր ժողովրդի համար: «Հայրիկ» տիտղոսը նա կրում է
երեսուն տարուց ի վեր եւ այդ առանց պատճառի չէ: Եւ
նա հայրիկ է, ոչ միայն իր հայրենակից Վանցիների, այլ հա-
մայն ծածկահայերի: /

Երբէք չեմ մոռանայ մի սրտաշարժ տեսարան, որ տե-
ղի ունեցաւ մօտ երկու տարի առաջ: 1885-ին, Ապրիլի 12,
նա պէտք է թողնէր, կառավարութեան հրամանով, Վանը
ու գնար Կ. Պօլիս: Առաջնորդարանի մէջ խմբուած էին բո-
լոր երեւելիներն ու սահմանադրական ժողովի անդամները:
Հայրիկը պիտի տար նրանց իր վերջին հրաժէշտը: Կրօնական
ժողովի ատենապետ հայր սուրբը մի սրտառու ճառով խոր
վշտեր էր յայտնում ժողովրդի կողմից ու շարունակ շեշտում,
թէ մեծ սուգ պէտք է պահեն իրենց խնամատար հօր, անձ-
նուրաց Հայրիկի բացակայութեան համար: Յանկարծ վեր
թռաւ տեղից եւրոպական տարազով հագնուած մի երիտա-
ւոր: Դա Վանայ հայ բողոքականների քարոզիչն էր: Մի
անախորժ զգացում տիրեց ամէնքին. բոլորն էլ համոզուած
էին թէ մի կրօնական անհամ վիճաբանութիւն պիտի բանայ
այդ «աւետարանական»-ը: Ուշադրութիւնները բարուեցան
եւ դահլիճի մէջ շնչառութիւն չէր լսուի:— «Ես բոլոր սրբ-
տով բողոքում եմ,—ասաց մի հանդիսաւոր ձայնով պ. բողո-

քականը—ատենախօս հայր սուրբի խօսքերի դէմ: Նորին սրբ-
բութիւնը ճգնում է ցոյց տալ, թէ Խրիմեան սրբազանը մի
միայն Վանցիների «Հայրիկն» է. . . Շատ սխալ է այդ. եւ
կարծում եմ, որ այդ խօսքերի դէմ պիտի բողոքէ ամբողջ
ճանկաստանը. . . Իբրեւ Խորքերդցի հայ եւ մանաւանդ բո-
ղոքական հայ, իրաւունք եմ համարում ինձ յայտնել ձեզ, որ
իմ հայրենակիցները շատ աւելի սիրում ու «իրենց» Հայրիկ
են համարում Խրիմեանին, քան Վասպուրականցիքը: Յոյս ու-
նիմ, թէ համայն տաճկահայերը բողոքում են այսօր իմ բե-
րանով ատենախօս հայր սուրբի դէմ. . . Խրիմեանը, կրկնում եմ,
համայն տաճկահայերի Հայրիկն է:»

Օգը թնդաց ծափահարութիւններով եւ կրօնական ժո-
ղովի ատենապետը ստիպուեցաւ յետ առնել իր խօսքերը:

Բայց խեղճ «աւետարանական»-ին էժան չը նստաւ այդ
սրտի զեղմունքը: Իր Վանցի հաւատակիցները փոքր ինչ ան-
վրստահ աչքով էին նայում նրան եւ քիչ էր մնացել որ ա-
մերիկական միսիօնարը պաշտօնանկ անէր նրան:

Գ.

Վանցիք չեն թողնում, որ Խրիմեանը մի օր հանգիստ
նստի իր տան մէջ:

—Հայրիկ, հինգ տարի է էրիկս (մարդս) Ստամբուլ է,
ոչ փող է ուղարկում մեզ, ոչ նամակ: Ոտիդ ղուրբան լինեմ,
մէկ նամակ գրիր նրան, որ ճար անի մեզ. . .

Հայրիկ, էրիկս շարունակ հարբած է տուն գալիս,
մեռ . . մ'ջանիդ, մէկ խրատ տուր նրան. . .

—Հայրիկ, որդիս Ստամբուլ եմ ղրկում, որ փող վա-
սակի, տէր էլ չունի, որ ճամփու ծախս գանի. . .

—Հայրիկ, գնում եմ Ստամբուլ. . .

—Մի գնա, ինչու ես գնում. . .

—Ձեմ կարող էստեղ շահուել, գործ չ'ունիմ, մի նամակ
տուր ձեռքս, որ Պօլիս օգնեն ինձ, տեղ աան:

—Հայրիկ, Կանդոյենց գործարանից ինձ վռնտեցին,
հացի պատառ չունիմ, խնդրիր էդ մարդուն որ էլի ինձ
ընդունի, Աստուած քեզ արեւշատութիւն տայ. . .

—Հայրիկ, եղբօրիցս բաժնւում եմ, ի սէր Աստուծոյ մէկ
էդ անամօթին խրատիր, որ արդարութեամբ վարուի հետս. . .

—Հայրիկ, գործ չունիմ, տեղ գտիր ինձ համար. . .

—Հայրիկ, ապրուստ չունիմ, որբերի տէր եմ. . .

—Հայրիկ, ուստայ Թորոսը հախս կտրեց, տաս օր նաւ-
քաշութիւն եմ արել նրա տանը. . .

—Հայրիկ, մեր տէրտէրներից մէկը ամէն օր ժամ չէ
գալիս, էդ ինչ անաստուածութիւն է. . .

—Հայրիկ, մեր տէրտէրը բամբասում է ամէնքիս, խը-
ռովութիւն է գցում մեր մէջ. . .

—Հայրիկ, Նորաշէնի վարժարանից հանեցին ինձ, իմ
անդ մի ուրիշ անպիտան վարժապետ բերին. կամ էդ մար-
դուն հեռացնել տուր այնտեղից կամ ուրիշ տեղ գտիր ինձ
համար. . .

—Հայրիկ, մեր Թաղականները (հոգաբարձուները) մեզ
շատ են վիրաւորում, մենք էլ ինչ վարժապետ ենք, որ աշա-
կերտների առաջ ամէն օր խայտառակվում ենք նրարցից. . .

—Աման, Հայրիկ, եօթ ամիս է ռոճիկ չեմ ստացել, որ-
դէքս անօթի են, էլ ինչ սրտով դաս տամ աշակերտներին,
որ գիշերներն անքուն եմ անցկացնում. . .

—Հայրիկ, մեր նոր վարժապետների ձեռք կրակ ենք
ընկել, էլ ուր մնաց մեր աղայութիւնը, իշխանութիւնը. . .
Թաղականը որ չը կարողանայ մէկ «չօր» ասել վարժապետ-
ներին, էլ ինչու համար ենք էսքան փող ծախսում վարժա-
տուների համար. . .

— Հայրիկ, ուզում ենք Կիրակոս վարժապետին դուրս անել, Աստուած սիրես մոռալիթ կաց, որ խռովութիւն չը հանի ժողովրդի մէջ. . .

— Հայրիկ, ժամուորները գանձանակ փող չեն գցում, քահանաներիս վիճակը մշակիցն էլ վատ է, մէկ քարոզ խօսիր, որ փող շատ տան. . .

— Հայրիկ, մեր ուսումնարանի աշակերտները թոշակն ուշացնում են, մէկ ատենախօսութիւն արա եկեղեցում, որ մեր հայվան ծնողները իրենց պարտքը ճանաչեն. . .

— Հայրիկ, կիրակի օր իմ դպրոցում հանդէս կայ, դու որ չը գաս ու ատենախօսութիւն չ'անես՝ փող քիչ կ'հաւաքուի... Գիտես որ իմ դպրոցը՝ մասնաւոր դպրոց է, ես էլ աղքատ եմ, պարտատէրերս խեղդում են ինձ. . .

— Հայրիկ, մի հրաւէր ուղարկիր Ռուսաստանի եւ Պօլսոյ լրագիրներին, որ նուէրներ հաւաքեն դպրոցիս համար, իմ դպրոցը ֆլանի դպրոցի պէս չէ, ես լաւ աշակերտներ եմ պատրաստում, նոր մեթոդներով եմ կրթում. . .

— Հայրիկ, ուզում եմ գնալ Ռուսաստան ժողովարարութիւն անելու, սուրբ կարգս վկայ, որ մեր գիւղ երեք քահանայ կայ, բայց եկամուտ չունինք, իրարու միմեկն ենք ուտում. . .

— Հայրիկ, ֆլան քահանան ինձ հետ թշնամութիւն ունի, ժողովրդին մատ է տալիս, մենք կարգակից եղբայրներ ենք, ի՞նչու պէտք է այնպէս անի. . .

— Հայրիկ, ես իմ ընկեր վարդապետների հետ ապրել չեմ կարող, մի վանք տուր ինձ, վանահայրութիւն անեմ. . .

— Հայրիկ, ֆլան վանքը ձեռքիցս առին, մէկ ուրիշ վանք տուր ինձ. . .

— Հայրիկ, մեռնենք արեւիդ, մեր գեղի ուէսը (տանուտէրը) տներս քանդեց, թուրքը չի անի մեզ հետ, ինչ նա է անում. . .

— Աման, Հայրիկ, ոտացդ հոդն ենք, Կարապետ հայր

սուրբից կանան աղատել մեզ. . . Նա որ գալիս է մեր գիւղ, լրակում է (կողոպտում է) ամէնիս. . . էլ ջան չէ մնացել մեր մէջ. . .

— Հայրիկ, ողորմութիւն տուր. . .

— Հայրիկ, հաց. . .

— Հայրիկ, հալաւ. . .

— Հայրիկ, հիւանդ եմ. . .

— Հայրիկ, հոգճատ մեռնեմ. . .

Դ.

Անցնենք ՎԱՐԱԳԱՅ Վանքը:

Հայրիկը շաբաթը երեք, չորս օր անց է կացնում այստեղ, որ քաղաքից երկու ժամ միայն հեռու է: Նա շատ անգամ ուզում է հանգիստ գտնել այստեղ նաեւ մի քանի աններես ձանձրացնողներից:

Բայց կարելի՞ բան է Հայրիկին հանգիստ թողնել:

— Հայրիկ, ճամբորդ եմ, Մշից նոր եմ եկել, մէկ երկու շաբաթ ուզում եմ այս վանքումն ապրել. . .

— Հայրիկ, քաղաք նոր շինած տունս վարձու եմ տուել, կը թողնեմ մէկ ամսով ընտանիքս բերեմ այստեղ. . .

— Հայրիկ, աղքատ գիւղացիք են եկել, ցորեն են ուզում. . .

— Հայրիկ, վանքի հովիւները ուռճիկ են ուզում. . .

— Հայրիկ, կամ ամսականս տուէք, կամ մի բան արէք, քաղաքից գալիս եմ էստեղ դասեր տալու, ախր ես էլ մեղք եմ. . .

— Հայրիկ, վանքի աղքատները շոր չունեն. . .

— Խրիմեան էֆէնդի հազրէթլերի՝— մօտենում է ակնածութեամբ ուստիկանը— Վալի փաշան (նահանգապետը) բարեւում է Ձերդ Սրբազնութեան եւ խնդրում վճարել վանքի տուրքերը. . .

—Հայրիկ, վաճառի ցորենը պակսել է, պէտք է մի քիչայ (մօտ 30 պուդ.) փոխ առնել գիւղերից. . .

—Հայրիկ, մի ինչ որ անծանօթ մարդ է եկել, ուզում է տեսնել քեզ. . . (Անծանօթ մարդը լինում է միշտ Ռուսաստանի կողմերից եկած):

—Հայրիկ, Ֆլան աղան բարեւում է քեզ, ասում է թէ հարսանիք ունինք, շնորհ բերէք մեր տուն. . .

—Հայրիկ, Ֆլան դպրոց տարեկան քննութիւն է, խընդրում ենք պատուել մեզ. . .

Ե.

Անցնենք ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ:

—Հայրիկ, այսօր քառասուն նոր պանդուխտ են եկել գաւառներից. . .

—Հայրիկ, Ֆլան թաղի մէջ մեր պանդուխտ մշակներից մէկը մեռել է. . .

—Հայրիկ, գործերս անյաջող են գնում, տղաներս մեր գիւղում անտէր են մնում, քանի մի դրուշ տուր, հասցնեմ. . .

—Հայրիկ, ամաչում եմ ասել, մէկ տարի է՝ եկել, պարապ ընկած եմ այստեղ, մի քիչ փարայ տուր, կաշխատեմ, կը վճարեմ քեզ. . .

—Հայրիկ, Ֆլան ամիրայի, վաճառականի, արհեստաւորի մօտ տեղ կայ, խնդրիր որ ինձ տան. . .

—Հայրիկ, մեղայ քո առաջ, գլուխս կտրուէր չը գայի էս անտէր քաղաքը, ճամբու ծախս տուր, յետ դառնամ, կորչեմ էստեղից. . .

—Սման Հայրիկ, ճամբու ծախս. . . Քանդուխ Ստամբուլ շինողի հօր գեօնը. . .

Զ.

Եթէ մենք անցնէինք ՎԱՍՊՈՒՐԱՍՏԻ գիւղերն ու Տաճկաստանի շատ հեռաւոր նահանգները, նորն բանք պիտի տեսնէինք, ընթերցող: Սմէն տեղ Հայրիկը՝ Հայրիկ է եւ ոչ ոք չէ քաշւում նրանից, Հայրիկի խորթ որդին չէ համարում իրեն: Նա ամէնքի Հայրիկն է: Եւ շատ քիչ տեղ կարելի է գտնել Թիւրքիայում, ուր ոտք կոխած չը լինի նա:

Պէտք է զարմանաս, ընթերցող, թէ ինչ աներեսութիւն է մարդոց կողմից՝ այդչափ գլխացաւանք տալ խեղճ Հայրիկին եւ արդեօք կարողանում է նա գոհացում տալ բոլորին:

Ի հարկէ որչափ էլ մարդիկ աներես լինեն, ախր էլի նրանց երեսը մնինք է շինուած, պղնձից խօ չէ շինուած: Եւ ինդրերը մէկ կը լինի, հազար խօ չի լինի: Բայց բանն այն է որ, նրանք գիտեն թէ միշտ երեսատեղ ունին Հայրիկի մօտ: Ել ինչ «Հայրիկ» է, որ երեսատեղ չունենան: Եթէ նրանք չը գան, օգնութիւն չը խնդրեն, իրենց վէրքերը չը բանան,—Հայրիկը կը նեղանայ: Այդ իրաւունքը տուել է նրանց Հայրիկը եւ նրա դուռը ամէն մարդու համար բաց է: Եւ չը կարծես, թէ այդ մարդիկը գալիս, ուղղակի ձեռք են պարզում նրան կամ թէ իրենց աղերսն ու սրտի ուղածը յանկարծ յայտնում: Ո՛չ: Նրանք ամենայն վստահութեամբ ու յուսալից մտնում են նրա սենեակը, համբուրում են անձկանօք նրա սուրբ ձեռքը եւ նստում ուրախ նրա դիմաց: Հայրիկը ինքն է սկսում հարցնել նրանց քէֆը, հանգամանքները, պարապմունքը, յաջողութիւնը, որդիքը եւ այլն: Կարօտեալը սիրտ է առնում ու բաժանում նրա հետ իր ուրախութիւններն ու ցաւերը: Ասում եմ «բաժանում» եւ այդ առանց պատճառի չէ:

Հայրիկը անկարող է չ'ուրախանալ ու չ'ողբելուիլ մէկի յաջողու-

Թիւնը լսելիս: Նա չէ կարող նոյնպէս տխրութեան մնայլ չը պատել իր զուարթ — մերամաղձոտ երեսին, ուրիշի անյաջողութիւնը լսելիս: Այնպիսի մի կարեկից գիրք է բռնում նա, այնպէս է յարում իր սիրուն, ազնիւ աչքերը քո աչքերիդ, որ անկարող ես զսպել քեզ ու չը հազորդել նրան քո ամէն մէկ վիշտը, թախիծը նոյն իսկ սխալներդ ու յանցանքներդ, եթէ մէկ մարդասպան էլ լինես: Այդ խոստովանանքով դու թեթեւացնում ես սիրող ու մի մեծ ծանրութիւն ընկնում է այնտեղից. . .

Այլ եւս չէ համբերում Հայրիկը, որ ինքդ բերան բանաս. նա խոստանում է ամոքել քո վիշտը, օգնութեան է հասնում, ազատում քեզ մտատանջութիւնից: Բայց դու ազատ ես, դու կարող ես ինքդ հրաւիրել ուղղակի նրա կարեկցութիւնը քո վրայ: Հայրիկը երբէք չի բարկանայ:

Բայց կան ի հարկէ, ընթերցող, եւ շատ պնդերեաններ, որ ի չարն են գործդնում Հայրիկի ներողամտութիւնը եւ չեն դադարում իրենց անհատնում ու անհամ ցիգանութիւնից ու մուրացկանութիւնից: Եւ այդ բանի մէջ առաջին տեղին են բռնում մանաւանդ Վասպուրականցիք, թերեւս կարծելով թէ աւելի մեծ իրաւունք ունին իրենց հայրենակցի վրայ:

Խեղճ Հայրիկ, կարծես մի մեծ յանցանք ես գործել, որ լոյս աշխարհ ես տեսել Վանայ մէջ:

Ի.

Ինչպէս է գ ո հ ա ց ն ու մ Հայրիկը իրեն գ ի մ ո գ ն եր ի ն:

— Երբ մարդոց բաւական է լոկ Հայրիկի խորհուրդը, միջնորդութիւնն ու պաշտպանութիւնը, նա զօհում է նրանց համար իր բոլոր ժամանակը: Սրբէն նրա բոլոր մտածումները

ղրկեալներին ու կարօտեալներին օգնելու համար են: Մէկին նա տալիս է պէտք եղած խրատն ու հրահանգը, միւսի համար նա դիմում է անձամբ զանազան մարդոց ու հաստատութեանց, երրորդի համար կանչել է տալիս իր մօտ պէտք եղած մարդիկը, չորրորդի համար՝ եթէ գործը հեռաւոր տեղում պիտի կատարուի՝ նա գրում է իր ազգու ու հոգեշունչ նամակները... Եւ փոստային օրերին նա չունի մի ազատ բոպէ մարդոց հետ տեսնուելու. նա գրում է իր անթիւ ու բազմատեսակ նամակներն ու կարգում՝ քառապատիկ թուով ստացածները: Նրանցից ոչ մէկում չէ կարելի գտնել մէկ տող իսկ, որ վերաբերէր Հայրիկի անձնական օգտին, բարեկեցութեան ու հաճոյքներին. նրանք բոլորն էլ մարդասիրութեան, հարստահարեալներին ու կարօտեալներին օգնելու համար են: Նա շատ՝ երախտագէտի մէկը միտն է բերել յայտնել նրան այդ թղթի կտորով իր շնորհակալութիւնը կամ թրջել է նամակն ծայրէ ի ծայր՝ գոհունակութեան արտասուքներով:

Բայց կան կարօտեալներ, որոնց անմիջական դրամական օժանդակութիւն է հարկաւոր, որպէսզի չմեռնեն անօթութիւնից, հիւանդութիւնից ու ապարդիւն պանդխտութեան սրտամաշ օրերից: Հայրիկը զօհում է այդպիսիների համար իր բոլոր նիւթական կարողութիւնը: Պատրիարքութեան միջոցին նա ունէր առատ ռոճիկ, իսկ 1883 թուից թիւրք կառավարութիւնը յատկացուցած է նրան, իբրեւ նախկին Պատրիարքի, 300 ռուբլի ամսաթոշակ:

Այդ փողերը, մինչեւ վերջին կոպէկ, Հայրիկը ցրում է կարօտեալներին...

Հայրիկի գրպանում փող մնալ չէ կարող, նա թշնամի է փողին — այդ գիտէ համայն տիեզերք:

Խրիմեանի ներկայութեամբ մի անգամ Պօլիս խօսակցութիւն կը բացուի Գրիգոր անունով մէկ շատ առատաձեռն մարդու վրայ: Հայրիկը խօսակցական կատակով կ'աւելտոյնէ



թէ «Աշխարհի մէջ երեք մարդ կայ, որոնց գրպանը միշտ ծաւ կ'պէտք է մնայ. Սուլթան—Ազիզ, Գրիգոր աղայ եւ Խրիմեան Հայրիկ»... Եւ ո՞վ կարող է հերքել, թէ այդ քսան տարի առաջ արտասանած խօսքը յաւիտենական չէր:

Բայց այնքան մեծ երկիր է Թիւրքիան եւ այնքան բազմաթիւ Հայրիկին գիմոզ տառապեալները, որ նրա ռոճիկը մի կ'աթիւ ջուր պէտք լինէր ծովի մէջ: Այդ պատճառով նա ծանր շղթայ է դրել իր հայրական անսահման հեղինակութեամբ շատ մեծահարուստ մարդոց վրայ ու վարժեցուցել նրանց կարեկցութեան, մարդասիրութեան ու զոհողութեան: Ուստի պէտք եղած ժամանակ, Հայրիկը պատուիրում է նրանց փող ցրուել հարկաւոր տեղեր կամ ինքն է աւանդում այդ, կորզելով նրանց փայլուն, զընգզընգան ոսկիները: Սակայն գաւառացիք չափազանց ժլատ ու գձձի են եւ Հայրիկը խորշում է լալկան հարուստներից: Նրա պատրաստած բարերարների մեծ մասը Պոլսումն են:

Նրանցից շատերը չեն էլ սպասում Հայրիկի գիմովին. նրանք գիտեն Հայրիկի անդաւաճան անձնութեանը, ճանաչում են նրա ծաւ գրպանը եւ եւ իրենք են բերում, դնում նրա ոտի տակ: Նրանք ոչ միայն փող, այլ իրենց կեանքը չեն ինայի Խրիմեանի համար:

Նրա այդպիսի բարեկամներից մէկն էր, ընթերցող, Գրիգոր Եֆէնդի Օդեանը, որ 'ի Տէր փոխեցաւ երկու ամիս առաջ Փարիզում եւ որի անունը յիշելիս՝ Հայրիկը պիտի փղրձկայ մինչեւ վերջին շունչ: Այդ հանգուցեալը, ընթերցող, Հայրիկի աշակերտներիցն էր, բարձր պաշտօնեայ Թիւրք Կառափարութեան եւ մինը Տաճկաստանի «Սահմանադրութեան» հիմնողներից: Օդեան Եֆէնտին իր հայրենասիրութեամբ, ազնւութեամբ, անձնութեամբ եւ անզուգական հանճարով ոչ միայն թագն ու պսակն է Պոլսեցիների, այլ պարծանք համայն հայութեան: Հայ ազգը քիչ է արտադրել այդ-

պիսի անձնաւորութիւններ եւ ես համոզուած եմ, որ նրա մահով Խրիմեանի կեանքից մի քանի տարի կտրուեցաւ: Ընթերցող, աղօթենք Օդեանի հոգու համար...

Ը.

Դժբաղդաբար շատ քիչ է պատահում, որ Հայրիկը մերժէ իր աջակցութիւնը որեւէ անարժան խնդրողին: Այդ է պատճառը, որ նրա թշնամիները այնքան դատաւիտում են խեղճին: Բացի այդ, նա խոստանում է աշխատել ու օգնել ամենքին, առանց հաշուելու իր ժամանակն ու կարողութիւնը: Ի՞նչ անէ Հայրիկը. մի կողմից իր սիրտն է տանջում մարդոց տառապանքները տեսնելիս ու արգելում նրան այդ հաշիւներն անել, միւս կողմից՝ թշուառներին անպատճառ օգնելը դարձել է նրա համար մի անբեկանելի սովորութիւն, մի երկրորդ բնաւորութիւն: «Չէ՛» խօսքը շատ դժուարութեամբ է դուրս գալիս նրա բերանից եւ նա, կարծես մեքենայաբար, անպատճառ «այո՛» է արտասանում:

Հայրիկի այդ յատկութեան վրայ խօսելիս, մի ծերունի յիշեցուց ինձ Վանայ մէջ, հետեւեալ քրդական առակը:— «Մարդու մէկը, ասաց նա, մի օր ձի է տանում բազար ծախելու: Յաճախորդները շարունակ բաց են անում նրա բերանը, որ ատամներից իմանան թէ քանի տարեկան է: Մէկ ժամուայ մէջ այնքան բաց—խուփ են անում զօռով խեղճ անասունի բերանը, որ նա ձանձրանում է այդ բանից եւ երբ տեսնում է միւշտարուն, ինքն է շտապում առաջուց բերանը բանալ ու գէժ տալ նրանց:»

Սակայն ներիր, ընթերցող, ծերունու բերած անհամեստ համեմատութեան. առական անխոտելի է:

Այդ ծայրահեղ բարութեան ու պատրաստակամութեան

հետեւանքը լինում է երբեմն այն, որ Հայրիկի գործերը ճապարղում են, մոտատանջութիւնն աւելանում ու տուած խոստումները մասամբ չ'իրագործւում:

Իսկ այդքանը բաւական է լինում նրա բամբաբասէր հակառակորդներին՝ պնդելու համար թէ Խրիմեանը անգործունեայ է, ֆլան է, բեսփան է...

Թ.

Հայրիկը մասնաւոր գորով ունի կանանց ու երեխաների համար. երկու թոյլ, ճնշեալ տարրեր ծածկահայաստանում, որ դարձնում են իրենց վրայ զգայուն օտարականի խիստ կարեկցութիւնը: Թէ առանձին խօսակցութեան մէջ, թէ քարոզներում, թէ գրուածներում եւ թէ տնային այցելութիւններում՝ նա բոլոր ուժով բողոքում, գութ է զարթեցնում ամուսինների ու հայրերի մէջ՝ դէպի կանայքն ու զաւակները:

Հայրիկի այդ ծնօղական գգուանքն ու վիշտը լաւ յայտնի է կանանցն ու երեխաներին ու նա պաշտում է հաւասարապէս երկուսիցն էլ:

Երբ այցելում է մի տուն, նա բնաւ իր բարձր դիրքի հակառակ չէ գտնում գիրկն առնել տան մանկիկներին ու փայլալայել նրանց: Տեսնում են այդ նրանց երջանիկ ծնողները ու փառք տալիս Աստծուն...

Ընդունուած չէ առհասարակ, որ ծածկահայոց գաւառացի կանայքը խօսին տղամարդոց հետ: Բայց Հայրիկը, իր այցելութեանց միջոցին, կանչել է տալիս տան պառաւաններին կամ «մեծ հարս»-ներին, խրատում է նրանց, մխիթարում ու օրհնում: Ոչ մի տղամարդ չէ կարող Հայրիկի ներկայութեամբ վատաբանել իր կնոջ. նա գոցում է իսկոյն նրա բերանը եւ գլխաւոր մեղաւորը նրան համարում...

Երբ մէկ տան մէջ ամուսնացած եղբայրներից մինը մեռնի, Հայրիկը բացէ ի բաց պատուիրում է նրա եղբայրներին՝ կրկնապատկել իրենց յարգանքն ու խնամքը դէպի այրի հարսը: Վայ նրան, ով չի կատարի այդ. Հայրիկը այլեւս կրդժուարանայ մտնել նրանց տուն:

Այդ է պատճառը, որ այրի կանայք միշտ աղօթող են Հայրիկի երկարակեցութեան:

Երբ մի տեղ Հայրիկի ներկայութեամբ հրապարակական հանդէս կայ, կանանց պատիւն աւելանում է եւ նրանք իրաւունք ունին տեղ ունենալ նստելու:

Մի անգամ Վանայ օրիորդական դպրոցում մրցանակաբաշխութեան հանդէս կար: Հայրիկը հեռաւոր գիւղումն էր եւ յոյս չը կար նրա հասնելուն:

Հարիւրից աւելի մարդ ու պատանի տեղ էին բռնել նրատարանների վրայ, իսկ յիսուսի չափ կանայք կանգնած էին նրանց յետեւ, ոտքին: Հանդէսի կէսին յանկարծ Հայրիկն հասաւ... Ամենքը ոտքի ելան ու Խրիմեանը բազմեցաւ իր բազկաթռի վրայ: Մէկ րոպէից յետոյ նա նկատեց հարստահարեալ կանանց. մեխամղձոտ մռայլը ծածկեց իր զուարթ դէմքին ու արտասանեց. «Ամէն մարդ այստեղ տեղ է գտել, միայն կանայք բանի տեղ չեն դրուել...»: Եւ նստարանների կէսը դատարկուեցաւ իսկոյն մարդիկներից...

Հայրիկը Վասպուրականի գիւղացոց (եւ ամէն տեղի) մխիթարիչ ոգին է: Նա պտտում է գիւղեր եւ օրերով ապրում նրանց մէջ: Շատ քիչ գիւղացի կայ, որ Հայրիկի չափ կարեկից ու քաջալերիչ տեսած լինի իր կեանքում:

Ժ.

Հայրիկին շատ է մտաւտանջում գաւառացոց տարագրութիւնը, պանդխտութիւնը, նրանց Պօլիս եւ այլուր թափառելը: Անկարելի է յետ կանգնեցնել Տաճկահայերին այդ մարդակույ հոսանքից. Ժողովուրդը ճնշուած է ու պարտքի տակ: Նա հաւատում է կոյր բաղտին եւ յուսահատութիւնը ստիպում է նրան հետեւիլ իր բնազդումներին:

Պօլիս եղած Ժամանակ Հայրիկը նոցա միակ միութարիչ, պաշտպանն ու հոգածու հայրն է: Նրանք միշտ հաւաքուած են Հայրիկի շուրջ եւ նա նրանց գետնափոր բոյները գերազասում է Բիւզանդիոնի մեծաշուք պալատներին ու առանց զգուելու ելումուտ է անում այնտեղ: Երկար տարիներ այնտեղ մնացողներին կամ դժբաղտ ու անգործ եղողներին նա վերադարձնում է, գրեթէ զօռով: Իրենց հայրենիք: Ի հարկէ այդպիսիներին նա ինքն է տալիս նաւի եւ այլ ճանապարհածախսերը: Այս բոլորէս, երբ գրում եմ սոյն տողերը, նա ունի կազմած Պօլսոյ մէջ փոքրիկ ընկերութեան պէս մի բան, որ իր դրամագլխով քշում, հեռացնում է այնտեղից պանդխտներին:

Շատ սեւ պիտի լինէր նրանց կեանքը առանց Հայրիկի փրկարար ձեռքի:

ԺԱ.

Քանի որ խօսքը պանդխտութեան վրայ է այստեղ, Թոյլ տուր ինձ, ընթերցող, կատարել այստեղ իմ մի մեծ պարտքս:

Եթէ մի Ռուսաստանցի ուղէ գնալ Տաճկաստան, նա պէտք է գտնէ անպատճառ Հայրիկին: Այլապէս մեծ դժուարութեանց կը հանդիպի նա, եթէ չ'ասենք կըկորչի...

Եթէ այդ ճանապարհորդի գրպանում «մկներ են միայն խաղում», — նա ոչ մի տեղ ընդունելութիւն չունի. ամէն դուռ գոց է նրա առաջ: Թող նա այնպէս չըկարծէ, թէ մեր վանքերում անաղարտ է պահուել նրանց հին, հռչակեալ հիւրասիրութիւնն ու օտարասիրութիւնը — երբէք եւ երբէք: Թող նա գլխիցն հանէ այդ «նախապաշարումը»: Առանց փողի նա տեղ չունի ոչ մի մենաստանում. վարդապետները մի խոժոռ հայեացք կընետեն վրան ու հետեւեալ օր յետ կ'ուղարկեն նրանց իրենց եկած ճանապարհով: Այսպէս է սովորաբար ամբողջ Թիւրքիայում եւ մանաւանդ Վասպուրականում: Բացառութիւնները շատ քիչ են ու պստահական:

Քեզ եմ հարցնում, ընթերցող, ի՞նչ անէ այդ անփող, անոռ ու անճանօթ թշուառականը...

— Թող նա գտնէ Հայրիկին, մտնէ Վարագայսուքը վանքը, նա կարսղ է լինել այնտեղ ամենաերջանիկ ասպընջականը: Վարագը իր ամբողջ սարով ամենաապահով ու միակ պատուարանն է նրա համար:

— Հայրիկ, մէկ անճանօթ է եկել...

— Կանչիր այստեղ...

Լոկ Հայրիկի դէմքը տեսնելուն պէս, Ռուսաստանցին շունչ է առնում, գուշակում է թէ լաւ ապագայ կայ իրեն: Այդպիսի քաղցր, հեզահամբոյր Ժպիտ նա ուրիշ եկեղեցականի վրայ տեսած չէր:

— Ես եկել, հանգիստ ես արդեօք, որ կողմիցն ես, ի՞նչպէս են հայրենակիցներդ, երկմր ես ուզում այս կողմեր մնալ...

— Ահա թէ ի՞նչ հարցեր է տալիս նա մէկը միւսի յետեւից մեր նորեկին: Եւ այդ՝ մի այնպիսի անուշութեամբ, մասնակցութեամբ ու կարօտով, որ նրա քաշած բոլոր նեղութիւններն ու անմարդասիրութիւնները օդն են ցնդում:

Անմիջապէս տրուում է նրան սենեակ, վառելիք, ուտեստ,

գրադարան ու ծառայ: Այլեւ մի ազնիւ խոստում գործելու ասպարէզ տոեղծելու...

Դէ՛քէ՛ք արա, մեր Ռուսաստանցի, դուրբան լինիս Հայրիկի ոտայ...

Այո, Խրիմեանը յարգում է Ռուսաստանցիներին: Նա սիրում է, բոլոր հոգով սիրում՝ մեր էրիտասարդների անկեղծութիւնը, եռանդը, խելքն ու անշահասիրութիւնը: Նա անձանձրոյթ, ժամերով զրուցատրում է նրանց հետ:

Ահա երկու օր է պանդուխտը դուրս չէ գալիս իր խցից: Հայրիկի ականջն է ընկնում, թէ Ռուսաստանցին միտած է: Նա մտնում է հիւանդի խուց ու բժշկում նրան իր քաղցր խօսքերով:

Նրա դուրս գալուց յետոյ, ալցելութեան կարգը գալիս է նրա ծառային: Սա մտնում է հիւանդի մօտ մի ահագին տաք չայամանով, բաժակով ու շաքարով: Նա լցնում է բաժակը այդ օրհնեալ ջրից մէկը միւսի յետեւից ու միտածին մատուցանում: Եւ մի գաւաթ չայը մեծ բան է պանդխտի համար:

Ահա Հայրիկի ականջն ընկաւ, որ պանդուխտը ճերմակեղէն չունի, կամ ունի եւ կեղտոտ է: Խուցն է մտնում նորէն մեր ծանօթ ծառան. նա մի բոխչայով դնում է քո առաջ երկու զոյգ շապիկ եւ շապիկ-ընկեր: Տեսնում ես որ դրանք մի հսկայական մարդու հագուստ են, այո, Հայրիկինն են դրանք: Դու կարող ես երեք անգամ փաթաթուիլ նրանց մէջ: Ընդունիր այդ նուէրը: Մերժել չես կարող. կըստիպուիս զօռով ընդունել: Բայց եթէ շատ լայն է, տուր վանքի դերձակին որ ձրիաբար շինէ քեզ համար եւ աւելորդ կտորներն էլ յետ տայ քեզ: Այդ կտորները պէտք կը գան կարկատան անելու... Չը կարծես թէ ճաճկաստանում կարող ես առանց կարկատանի ապրել: Գիտես էլի, ճաճկաստան է, քո հօր տունը խօ չէ:

Այդ ամէնից յետոյ Հայրիկը հռչակում է քո անունը ժողովրդում, պաշտպանում է քեզ խուժանի հալածմունքից, գտնում է պաշտօն ու ասպարէզ, եթէ դու մի բանի պէտք եկող մարդ ես: Իսկ եթէ ուզում ես վերադառնալ Հայրենիքդ կամ գնալ ուրիշ կողմ, Հայրիկը չի խնայի տալ քեզ նաեւ ճանապարհածախս:

Մեծ ապերախտութիւն կը լինէր իմ կողմից, ընթերցող եթէ այստեղ չըյայտնէի, որ ամբողջ եօթ ամիս վայելած եմ Հայրիկից Վարագում ամենայն բարիքներ, իսկ չորս տարի էլ ապրել եմ Վանում նրա բարձր հովանիի տակ: Ինձ պէս շատերն են հանդիպել այդ բազմի եւ դեռ եւս իմ օրով տասից աւելի Ռուսաստանցի է մտել այնտեղ:

Այդ պատիւը, ընթերցող, նա արել է մեզ՝ ոչ իբրեւ մեր անարժան ու ապիկար անձանց՝ այլ անշուշտ յանուն եւ 'ի յարգանս համայն Ռուսահայոց, որոնք շատ մեծ տեղ են բռնում նրա սրտում: Մեզ պատուելով, նա պատուել է ամէնիդ: «Ինչ որ արել էք այս փոքրիկներից մէկին, — ասում է մեր Տէր Յիսուսը — այն ինձ էք արել:»

Յայտնենք ուրեմն սիրելի Հայրիկին մեր ջերմ-երախտագիտական զգացումները, մաղթենք նրան երկար օրեր ու յաջողութիւն իր բազմալատակ գործերում:

ՓԲ.

Հայրիկը նեղ հայամոլ չէ: Նա վեր է բարձրացնում ամէն անկեալին. բաւական է որ նա մարդ լինի եւ արժանի կարեկցութեան: Թիւրքերի, քրդերի, ասորիների ու եզդիների մէջ Հայրիկը մեծ համարում ունեցաւ մանաւանդ 1879—1880 թուի սովից յետոյ Վասպուրականում: Այդ ժողովուրդների մէջ առակի կարգն է անցել Խրիմեանի անարատ վարքն ու մար-

գասիրութիւնը եւ նրանք մեծ ակնածութեամբ են արտասանում այդ «Հայոց մեծ Կարաբաշ (վարդապետ), Կոնստան Էֆէնդու» անունը, եւ գիտեմ ասորիք ու քրդեր, որք Խրիմեանին աւելի բարձր են դասում իրենց Մար—Շմոնից ու Շէֆիերից: Կառավարութեան էտղմից Հայրիկին 'ի պատիւ տրւում է Վանում մի ոստիկան, իբրեւ թիկնապաշ նրա յանապալի նամշորդութեանց մէջ: Լոկ կառավարութեան վիրաւորանք չը պատճառելու համար, նա համաձայնում է պահել իր մօտ այդ ոստիկանին եւ նամապաշորդում է մեծ մասամբ մէնապի: Նա երբեք աւազակներից չէ վախենում: Եւ սովորութիւն չունի զէնք բանեցնելու:

Քանի քանի անգամ պատահել են նրան քիւրդ գողերը շատ անպիշ ու յետ ընկած նամապաշներում, բայց երբեք նրան ոչ ոքի մօտը գիպած չէ: Խրիմեանի մէկ վսեմ հայրենացքը՝ որպէս Երեստոսի խաչ հարածում, խափանում է այդ անպիտան սատանաներին: Եղել են մինչեւ իսկ գէպքեր, որ այդ մարդիկը վաթմուս են եղել յատուկ նպատակով, բայց նրանց մտածմունքը միշտ ընդունայն է անցել...

Վերոյիշեալ ոստիկանը Հայրիկի սրտին 'ի մօտոյ ծանօթ լինելով, կատարելապէս պաշտում է նրան: Նա դարձել է Հայրիկի ձեռքին մի հեղահամբոյր դառ: Վկաներ կան, որ այդ թիւրք ոստիկանը իր ազգակիցների մէջն իսկ խոստովանել է թէ «Խրիմեան Էֆէնդու ոտի կեղտի հետ չեմ փոխի մեր բոլոր մոլաններն ու շէֆիերը»...

Քանի քանի մահմետականներ այդ մահադիմող սովի ճիրաններից ազատուելով Հայրիկի բարերարութեամբ, լստում էին նրա փէշերը ու քրիստոնէութիւն ընդունել խոստանում: Հայրիկը չը համաձայնեցաւ: Նա մերժեց բոլորին, չ'ուզեց առուտուր շինել իր մարդասիրութիւնից եւ հարստահարել թշուառներին իր բարերարութեամբ:

Հայրիկի ներկայութիւնը Վասպուրականում այդ սովի

տարին, ընթերցող, եթէ ասեմ մի նախախնամական տնօրէնութիւն էր, սխալուած չեմ լինի: Վասպուրականացի կէսը պիտի կոտորուէր, եթէ այդ անձնուրաց ու անշահասէր մարդը այնտեղ չը լինէր:

Մեր ուղարկած հազարաւոր ռուբլիների ու Պօլսեցոյ լիւրաների քառորդն իսկ չը պիտի ծառայէր իր նպատակին: Այդ փողերը պիտի դառնային «շան ու գէլի փայ»... Բայց էլի կերան մեր փողերի մի մասը, էլի Հայրիկի սուր աչքից աներեւութացան ռուբլիներ: Եւ քանիներ, որ պաշտօն էին ստանձնել խնամել ու հաց ցրուել սովալլուներին (մեր կամ Պօլսեցոյ փողով, ի հարկէ) հարստացան, փարթամացան ու տներ շինեցին, ընթերցող: Բայց ասում եմ՝ Հայրիկն այնտեղ չըլինէր — «ամակը Երուսաղէմ»...

Այդ փողերը ծախսելուց զատ, Հայրիկը պատուիրել էր բոլոր հարուստներին չը գողնել իրենց դռները կարօտեալների առաջ, չը խնայել մի մի պատառ հաց այդ խեղճերին: Բայց շատերը խաբում էին նրան ու ակամջախից լինում:

Մի անգամ նա փողոցով անցնելիս, տեսնում է սովեալների մի խումբ այդպիսիներից մէկի գրան առաջ: Նրանք ծեծում են դուռը, բայց բացանող չը կայ: Հայրիկը իջնում է ձիուց ու պատուիրում շարունակել ծեծելը: Քառորդ ժամից յետոյ տան աղամարդներից մէկը տեսնում է այդ գրան ծակից՝ ու դուռը բանում: — «Թշուառական» — ասում է նրան Հայրիկն ու մի փառաւոր ապտակ հասցնում...

ԺԳ.

Հայրիկի անչափ գորովը միայն մարդոց վրայ չէ որ տարածւում է: Նա մեծ գովթ ունի գէպի անասունները: Դեռ ուր էին այժմեան նորերուկ «Կենդանիներին հովանաւորող

ընկերութիւն»—ները, երբ Հայրիկը իր բնական խելքով ու փափուկ սրտով հասկացել էր թէ մեծ անխղճութիւն է կենդանիներին չափից դուրս չարչարելը:

Հայրիկի տան եւ Վարազայ վանքի անասունները աշխարհի ամենաերջանիկ կենդանիներիցն են: Մի աւելորդ բեռ, մի ժամ սահմանից դուրս յոգնութիւն, մի մտրակի խիստ հարուած՝ դեռ նրանք տեսած չեն:

Մի գիշեր վանքի ձիապահին յայտնեցի, որ միւս առաւօտ իմ հեծնելի ձին այս ինչ ժամին պատրաստ պահի, որ քաղաք իջնեմ: Նշանակեալ պահից փոքր ինչ առաջ ձիապանն ինձ յայտնեց, որ այդ օր անկարելի էր կենդանին ինձ տալ, զի վարդապետներից մէկը կանուխ առաւօտ մօտիկ գիւղն էր գնացել ու վերադարձել...

—Տնաւեր չ'եղած,—ասացի նրան—Շուշանից գիւղը գրնալն ու գալը մի ժամ չէր տեւի, քո ձիդ բամբակիցն է, որ էլ քաղաք չ'երթայ...

—Վարժապետ, մեռնեմ քե,—պատասխանեց նա—ես ձին չեմ խնայի, բայց Հայրիկը որ լսի կը վռնդէ ինձ...

Ես խստութեամբ պահանջեցի որ ձին թամբէ: Երկար տատանումից յետոյ նա ասաց թէ «լաւ, շորերդ հագիր»: Ուրախութեամբ դուրս ընկայ սենեակից ու բարձրացայ վեր Հայրիկին մնաս բարեւ ասելու:

Բայց ի՞նչ եմ տեսնում... Անպիտան ձիապանը նրա սենեակում... Հայրիկը մի դժգոհ հայեացք միայն ցոյց տուեց բարեւիս ու լռեց:

—Դու գնա,—գործաւ ձիապանին Հայրիկը—վարժապետն էսօր այստեղ կը մնայ...

—Բայց Հայրիկ,—բողոքեցի ես—ձին Շուշանց է գնացել, Ստամբուլ խօ չէ գնացել...

—Դու գնա,—կրկնեց Հայրիկը ձիապանին...

Բայց քեզ պէտք է իմանալ, ընթերցող, աւելին: Հայրի-

կը անկարող է ներկայ գտնուել անասունների մորթելուն... Մինչեւ անգամ, երբ նա տեսնում է, որ մի տեղ հաւ են մորթում, իսկոյն երեսը շուռ է տալիս...

Մօտ քսան տարի առաջ Հայրիկը Մշոյ Առաջնորդ ու Ս. Կարապետի վանահայր էր: Անկարգ ու տգէտ վարդապետները ահագին խռովութիւն էին հանել նրա դէմ: Հայրիկապաշտ երիտասարդները մի կենդանի գայլ էին բռնել ու կապկպած ձգել նրա առաջ:—«Հայրիկ, ասել են նրանք, թոյլ տուր մեզ բռնել, կապոտել բոլոր թշնամիներիդ ու դնել այսպէս ոտիդ տակ»... Հայրիկը ի խոհեմութիւն է հրաւիրում այդ տաք—գլուխ կտրիչներին:—«Իսկ այս գայլը—աւելացնում է նա—մեղք է այսպէս կաշկանդել, թողէք որ խեղճը ազատութիւն վայելէ, թողէք որ Հայրիկի խաթրու տարին մի մի ոչխար յափշտակէ ձեզանից»...

Այդ ծայրահեղ գովմն ու զգայականութիւնը Հայրիկի մէջ մտել է կարծես իր մօր կաթի հետ ու անդացել, երկաթացել է այնտեղ:

Նա ինքը փախչում է հաւի արիւնից, բայց ամենեւին հակառակ չէ, որ կողոպտուած գիւղացիք մորթեն քիւրդ աւազակներին...

ԺԳ.

Իր անյիշաչարութեամբ, երկայնամտութեամբ ու անսահման ներողամտութեամբ Հայրիկը մի կատարեալ մարմնացում է Աւետարանի:

Որքան ուզես բամբասիր, զրպատիր, յանցանք դործիր նրա դէմ, անկարող կը լինես հրաւիրել նրա ատելութիւնը, զայրոյթը քո վրայ: Ա տ ե լ բառը Հայրիկին անծանօթ է, զայրանալը՝ անբնական: Տասը տարի որ նստես նրա մօտ խօ-

սելու, չես կարող մի բառ կորզել նրանից իր միս ուտողների, զրպարտողների ու ամեն տեսակ թշնամիների դէմ: Հայրիկը մի ականջով լսում է այդ ամէնը եւ միւսից իսկոյն դուրս թողնում: Չարմանալի մոռացկոտ է նա այդ բանի մէջ:

Եւ չէ ախորժում լսել քեզանից որեւէ քննադատութիւն իր թշնամիների վրայ: Նրա դժգոհ դէմքը հրաւեր է կարդում քեզ փոխել անմիջապէս խօսակցութեան նիւթը ու անցնել աւելի կարեւոր բաներին:

Ոչ միայն խօսքով, այլեւ ոչ մի գործով նա չէ արտայայտում այդ անկարելի բան է, որ Հայրիկը պատժէ, վրէժառնէ երբեւիցէ իր հակառակորդներին:

Նրա հակառակ, նա պատրաստ է ամէն բարութիւն անել իրեն ատողներին: — «Բարութիւն արէք ձեզ ատողներին», «ներեցէք յանցաւորներին եօթ անգամ եօթանասուն եւ եօթանգամ» — պատուիրում է մեզ Քրիստոսը. եւ Հայրիկը այլապէս չէ հասկանում «լինել քրիստոնէայ», բայց եթէ մինչեւ վերջին տառը կատարելով Աւետարանի բոլոր խօսքերը:

Այդպիսով «ձայն բարբառոյ յանապատի» են մնում իր դէմ հանուած բոլոր անախորժ գոռիւն — գոչիւնները եւ նա շարունակում է ապրել իր խաղաղ, անվրդով կեանքով...

Բայց ցաւալին այս է, որ նա տարածում է յաճախ իր այդ անսպառ բարութիւնն ու ներողամտութիւնը նաեւ հասարակական գործերի դէմ մեղանջողների վրայ:

— Ահա ազգային ժողովները հաստատում են, որ այդ ինչ վարդապետը գողացել, կողոպտել է իրեն յանձնուած վանքի կարողութիւնը: Նրանից պահանջում են գողօնը ու սպառնում յանձնել դատարանին...

— Ահա (մարդ), վարդապետն ո՞վ, հաշիւ պահանջելն ո՞վ, — թողէք կորչի այստեղից այդ թշուառականը...

Նատապարտեալը նրա ոտն է ընկնում ու փառք տալիս Աստծուն...

— Ահա մի քահանայ, մի ուսուցիչ, մի երեսփոխան, մի հոգեւորական, մի ամուսին, մի զաւակ...

Բայրին էլ թողութիւն է շնորհում Հայրիկը եւ ցաւեցնում այդպիսով շատ անգամ իր բարեկամներին: Վատ մարդոց պատժելու համար նա բաւական է համարում իր դժգոհ դէմքն ու կարճ յանդիմանութիւնը:

Յրիստոնէական ներողամտութիւնը շատ բովելի բան է, ընթերցող, բայց ի՞նչ անես, որ էս անտէր աշխարհում միշտ գործ չէ տեսնում Աւետարանը, այլ պէտք է լինում նոյնպէս փոքրինչ ջարդատել չար մարդկանց թեւերը...

Բայց Հայրիկը փորձել է երբեմն պատժել այնպիսի մարդոց, որոնք իրենց բարձր դիրքով կարող էին աւելի մեծ վնասներ տալ ժողովրդին ու եկեղեցուն: Այդպիսիներից մէկն էր Ախթամարայ Խաչատուր կաթողիկոսը, որ բռնի բազմել էր այդ հետտեալ Աթոռի վրայ, առաջուց սպանել տալով իր նախորդին:

ԺԵ.

Չարմանալի համեստ ու անփառասէր է Հայրիկը:

Երբ մի մեծ Արքեպիսկոպոս, մի Պատրիարք, մի աշխարհահռչակ Խորհմեան Հայրիկ՝ զիջանում է անխտիր ու սիրով խօսակցիլ ամէն մի աղքատ, գիւղացի ու մշակ մարդու հետ եւ շատ անգամ էլ ինքն այցելութիւն ապրիս նոցա գժուձ խրճիթներին, — կարելի է մի գաղափար կազմել խոնարհութիւն ու համեստութիւն կոչուած բառերի վրայ: Իր այդ պարզութեան ու «աւակականութեան» համար Հայրիկը ընկել է շատ փառամոլ, անօրոգիւրդատէր ու քարասիրտ մեծապատիւ ազանների ու էֆէնդիների աչքից:

Ի հարկէ Հայրիկը միշտ Հայրիկ է եղել եւ նա անում

էր այդ նաեւ իր պատրիարքութեան միջոցին: Պատահում էր որ մի փետմափայլ հայ ամիրայ կանգնեցնում էր Պատրիարքարանի առաջ իր շքեղ կառքը:— «Ի՞նչ յարգելի ամիրաներ ու էֆէնդիներ կան հիմայ սրբազան Պատրիարքի մօտ» — հարցնում էր նա դրան սպասաւորին: Եւ երբ պատասխան էր ընդունում թէ «Հայրիկը շրջապատուած է գաւառացի պանդուխտներով ու Պօլսեցի ջահել-ջուհուներով» — «fi done!», — արտասանում էր փետմափայլն արհամարհանքով ու քիթը վեր բարձրացնում:— «Քշիր», — հրամայում էր նա կառապանին ու գրգռացնում իր կալեոսկան դէպի «փետմամեծափառ» բէյերի ապարանքները:

Համեստութիւն է փայլում Հայրիկի դէմքի, շարժմանքների եւ ամբողջ խօսակցութեան մէջ: Նա չը գիտէ ծաղրել, արհամարհել, բարձրից նայել՝ նոյնիսկ ամենաչնչին մարդու վրայ:

Նրա խօսակցութեան մէջ երբէք չես կարող գտնել մի բառ, որ ակնարկում լինէր իր փառաւոր անցեալը, հոյակապ գործերը, մեծամեծ բարերարութիւններն եւ այլն եւ այլն: Եթէ տառ տարի խօսացնես նրան, առանց ինքդ տեղեկութիւն ունենալու նրա անցեալ մեծագործութիւններից, շատ սովորական մարդոց մէկը պիտի համարես նրան: Մինչեւ մենք տեսնում ենք եպիսկոպոսներ, մանաւանդ Տաճկաստանի եպիսկոպոսներ, որք մի տեղ նստած ժամանակ իրենց բան ու գործ են շինում՝ մի միայն իրենց անցեալ, ֆլան ու ֆստան գործերի փառաբանութիւնները: Բայց Խրիմեանը գիտէ, որ Աւետարանն արգելում է իր սպասաւորների ծայրահեղ անձնագովութիւնը:

Խոնարհամիտ ու համեստ մարդը չէ կարող երբէք փառասէր կամ, աւելի ճիշտն ասած, փառամոլ լինել: Երբէք Խրիմեանը չէ վազել փառքի յետեւից, այլ փառքը միշտ ինքը եկել, գտել է նրան:

ԺԶ.

Ընթերցող, չը գիտեմ ունեցե՞լ ես դու առիթ ներկայ լինելու մեծ մարդոց կատակներին: Չը գիտեմ ի՞նչու արդեօք յատուկ է այդ մարդոց անքան անոյշ կատակներ անելը:

Հայրիկը իր կատակներով ու սրամտութեամբ չէ ուզում երբէք ուկնդիրների ուշքը զօռով դէպի ինքը գրաւելու ու նրանց ծափահարութեանց արժանանալու: Նա անում է այդ՝ քմիծաղ, բայց պարզութեամբ ու ամենայն վեհութեամբ:

Ահա լսիր նրա հազարաւոր կատակներից մի քանիսը:

— Վերոյիշեալ Վանայ սովի ժամանակ քանի մի խամքիւրդեր յոյս չեն ունենում Հայրիկից մի օգնութիւն ստանալու: Նրանք պատրաստում են մի խնդրագիր, որի մէջ խոստովանում են քրիստոնէութեան ճշմարտութիւնը ու կամք յայտնում կրօնաւորի լինելու: Իսկ իրենց գլխաւոր ակնկալութեան մասին ամենեւին բան չեն յիշատակում:— «Շատ լաւ, պատասխանում է նրանց Հայրիկը, բայց հիմայ գործ ունենք, երբ որ սովը վերջանայ՝ այն ժամանակ եկէք... Հիմայ մեր կարասի ներկը չէ բանում»...

— Լուր տարածուեցաւ թէ Խրիմեանը կաթողիկոսական ընտրելիներից մէկն է նշանակուել: Վանքիք գունդագունդ թափուեցան նրան շնորհաւորելու: Եկողներից մէկն էր նոյնպէս մի ֆրանս քահանայ՝ նորածեւ, փառաւոր գլխարկով:— «Ծօ, թշուառական—դարձաւ գէպի նա Հայրիկը—պալատական քահանայ ես դարձել դու» — «Չէ, Հայրիկ—պատասխանեց տէրտէրը—Վեհարանի քահանայ պիտի դառնում»: — «Ի հարկէ, վրայ բերաւ Հայրիկը—մի մի Մանկունի անպակաս պիտի լինի այնտեղից»...

— Նոյն միջոցին մտաւ նրա մօտ վարժապետների մի խումբ: Նրանցից մէկը մի ճռճաւն ճառ կարդաց նրա համար:— «Գիտեմ, վարժապետներ—պատասխանեց նրանց Հայ-

րիկը—գիտեմ ձեր ուրախութեան պատճառը. եթէ Սատուած յաջողի ինձ էջմիածին գնալ՝ միտք ունիմ մի անկելանոց հիմնել ծոյլ վարժապետաց համար»...

—Նոյն միջոցները նա քարոզ խօսելով եկեղեցում, ի մէջ այլոց արտասանեց. «Ես համոզուած եմ, Վանցիք, որ ձեզմէ շատերը, որոնք աղօթում են Խրիմեանի կաթողիկոսութեան համար, արդէն հանգսնակութեան թղթեր են պատրաստած խեղճ Ռուսաստանցիներից բօլ փող դուրս գջլելու համար»...

—Սովորական բան է շատ ժուլիկների համար Խրիմեանի «եղբորորդի», «քրոջորդի», «եղբօրաներ», «եղբորորդու աներձագ» եւ ես ինչ գիտեմ՝ հազար տեսակ օյինբազ տիտղոսներ ընդունելով, զանազան հարուստներից նրա անունով պարտքեր վերցնելու։ Այդպիսի օյինբազներից մէկը Խրիմեանի Պօլիս եղած ժամանակ մի վաճառականից հարկւր մանէթ փող է անուշ անում ու աներեւութանում։ Վաճառականը տեղեկանում է, որ նա Երուսաղէմ է գնացել։—«Հայրիկ, — դիմում է նրան վաճառականը—Սրբազնութիւնդ մի եղբորորդի ունէիր, ո՞ր է նա հիմայ։»—«Ես «եղբորորդի» շատ ունիմ, ո՞ր մէկն է այդ։»—«Փլան վարդապետը, որ ձեզ մօտ յաճախ ելումուտ ունէր։»—«Հա... քանի՞ ոսկի է պարտ» — հասկանում է իսկոյն Հայրիկը ու տալիս 100 մանէթ, առանց գաղտնիքը բանալու։—«Բաղդաւոր ես, որ իմ լաւ «եղբորորդու» ես պատահել—աւելացնում է նա ծիծաղելով—թէ չէ եթէ ուրիշներին հանդիպէիր, պէտք է անանկացնէիր Խրիմեանին»...

—Պօլիս խմբագիրներից մէկը աննպաստ բաներ էր գրում իր լրագրում Խրիմեանի դէմ։ Խրիմեանն էլ այնտեղ էր։ Մէկ օր նա հրաւիրուած է լինում մի մեծ խնձոյք. այնտեղ է մտնում նաեւ իբրեւ հիւր այդ երիտասարդ խմբագիրը ու մօտենում Հայրիկի աջն առնելու։ Հայրիկը փառաւոր կերպով քաշքշում է նրա ականջը։—«Հայրիկ, կըցաւի կոր» — բղա-

ւում է պ. խմբագիրը։—«Թշուառական, պատասխանում է ծիծաղելով Հայրիկը, այնքան պէտք է քաշեմ, որ իշի ականջ դառնայ»...

—Հայրիկը շատ է ցաւում եւրոպական կրօնների ծաւալման համար հայոց մէջ։ Բայց նա անխելքութիւն է համարում հալածել ու հայհոյել նրանց։ Նա գիտէ, որ նրանց քարոզիչների յաջողութիւնը կախուած է մեր հոգեւորականների ապիկարութիւնից ու հասկացող հայերի անտարբերութիւնից։ Այդ միտիոնարները ամբողջ Թիւրքիայում յարգում ու սիրում են մեր եկեղեցականներից միմիայն Խրիմեանին ու հանգուցեալ Ներսէս Պատրիարքին։ Եւ այդ ոչ միայն նրանց ներողամտութեան, այլ ընտիր ընտիր բարեմասնութեանց համար։ Խրիմեանը թոյլ է տալիս իրեն միայն սրամիտ կատակներ անել երբեմն նրանց հետ։—«Իօկտօր—ասում է նա ամերիկացի քարոզիչն—հետաքրքիր է իմանալ, թէ ո՞վ էր օսւլայում մեր Սուաքեալների (Քրիստոսի աշակերտների) շապիկները»... Կամ «Պատուելի, արդեօք ինչ գոյնի փրակ էին հագնում նրանք»... Կամ «Արդեօք ո՞ր Ընկերութիւնիցն էին ստանում նրանք իրենց ուռնիկները»... Եւ նա արտասանում է այդ սրախօսութիւնները այնպիսի մի վեհ ու քաղցր հեգնութեամբ, որ մեր զպլտուած ու կոկուած միտիոնարները կարմրում են ամօթխածութիւնից ու գլուխը կախում համեստութեամբ։

Բայց Հայրիկի մանր մունր կատակներին սահման չըկայ։ Կատակի ձեւով նա սովորութիւն ունի նաեւ փառաւոր ապտակներ հասցնել զանազան չարածձի մարդոց... Քիչ է պատահում, որ նա չը համեմէ իր ամեն մի խօսակցութիւնը շնորհալի սրամտութիւններով։

Եւ լսողը ոչ թէ անհամեստանում, երես է առնում նրանցից, այլ ամենայն ակնածութեամբ զարմանում է նրա հանճարի վրայ։

ԺԷ.

Եթէ Խրիմեանը Ճաճկաստանի առաջին քարոզիչը չէ, գէթ ամենալաւերից մէկն է: Բայց նա ունի քարոզչական այնպիսի յատկութիւններ էլ, որ թերեւս ամբողջ աշխարհում շատ քիչ մարդ ունենայ:

Հայրիկը չէ քարոզում այն արհեստական, չոր ու ցամաք, անհանգիստ, խրոխտ կամ երկչոտ եղանակով, որ մենք սովոր ենք առ հասարակ տեսնել: Հայրիկը ամեն բանի մէջ Հայրիկ է: Քարոզելիս նա չէ փոխում մաղաչափ: Նոյն քաղցր—մեղամաղձոտ ժպիտը, նոյն արդար ու հանգիստ սիրտը, նոյն մտախոհ ու վսեմ աչքերը, նոյն անուշ, մարդասէր ու լսողի սիրտը ծակող ձայնը...

Նրա քարոզը ոչնչով չէ տարբերւում իր մասնաւոր խօսակցութիւնից, բայց Աստուծոյ տաճարը եւ խուռն ամբոխի լարուած ուշադրութիւնը տալիս են նրա խօսքերին աւելի ու աւելի վեհութիւն:

Նա քիչ է խօսում Կրօնի ու Աստուածաբանութեան բարձր, դժուարամարտ նիւթերի վրայ: Նրա բոլոր խօսքերը հիմնուած են Աւետարանի պատուէրների ու Քրիստոսի վարքի վրայ: Այդ հիմունքներով նա ապացուցանում է իր Ժողովրդի բոլոր զեղծումները: Նա հանդէս է բերում վաճառականի, վաշխառուի, ազգային ու պետական պաշտօնեայի, ընտանիքի հօր, որդեւէր մօր եւ այլոց անզուսպ ու անարդար արարմունքները: Նկարագրում է հարստահարեալ քաղաքացիների ու ճնշեալ գիւղացիների դառն դառն տանջանքները: Նա նիւթ է վերցնում վերջապէս՝ տգիտութեան, անխղճութեան ու մարդկային կրքերի ամէն տեսակ զոհերից, խելք ու օրիւնաւորութիւն է սովորցնում տկարամիտներին, գթութիւն ու կարեկցութիւն է հայցում քարասիրտներից, ամբողջ, մխիթարում է թշուառներին:

Նա քարոզում է սովորաբար նստած, բայց յաճախ վեր է թռչում իր տեղից եւ աջ ձեռքը դէպի վեր տանելով՝ Երկնքի արդարադատութիւնն է յիշեցնում:

Քարոզելիս նա յաճախ բացականչում է. «Ժողովուրդ Հայոց, ձեր արածները հակառակ են բանականութեան», «Ժողովուրդ Հայոց, չը կարծէք թէ Խրիմեանը չէ իմանում, թէ ի՞նչ է կատարւում ձեր տներ», «Ո՛հ, մեղք է ձեր Հայրիկ», «Ա՛խ, Ժողովուրդ, մինչեւ երբ պիտի ողբամ քո տգիտութիւնը»... Եւ այդ տալիս է նրա խօսքերին մի զգայուն արտայայտութիւն:

Ոչ մի քարոզ նա չէ տանում կատարեալ միօրինակութեամբ, թախիծն ու զուարթութիւնը, լացն ու ուրախութիւնը յաջորդում են իրար փոփոխակի:

Երբ նա ազդու ու սեւ գոյներով մերկացնում է ամբոխի առաջ այդ «Թշուառութիւն» կոչուած մարդկային նախադրեքը, — մի մռայլ վարագոյր ծածկում է ամէնքի դէմքերը, հառաչանք ու հեծկըլտանք է լսում ամէն անկիւնից: Երբ նա ժպտում, ոգեւորւում է մարդկային առաքինութիւններից, — զուարթուն հրեշտակը կարծես լոյս է ապլիս ամէնքի երեսներին: Իսկ երբ նա սրամտութեամբ, առակով ու կատակով հեգնում է անմիտ ու անգութ մարդոց արարքներն, — մի ուժգին ծիծաղ թնդացնում է եկեղեցու պատերը: Մինչեւ իսկ շատերը, որոնց ականջին լաւ չէ հասնում հեռուից բեմասացի մեղմանոյշ ձայնը — տխրում ու ծիծաղում են, լոկ նրա դէմքը նշմարելով...

Համաձայն ես, ընթերցող, որ աննման է Հայրիկի քարոզը իր տեսակի մէջ:

Այդ է պատճառը, որ նրա քարոզած միջոցին եկեղեցում ասեղ գցելու տեղ չէ լինում եւ մարդոց շունչն է կրտրում: Բաւական է որ Վանում, Պօլսում կամ այլուր, լուր տարածուի, թէ Խրիմեանը քարոզելու է այս ինչ տեղ. բոլոր

եկեղեցիները դատարկուամ են եւ մինչեւ իսկ հեռաւոր գիւղերից գալիս են նրան ունկնդրելու: Տաճկաստանում քարոզն ու Պատարագը առաւօտներն են լինում եւ շատ ծոյլեր նախորդ գիշերը յատկապէս սովորականից կանուխ են պարկում, որ չը զրկուին այդ անզուգական բեմբասացութիւնից:

ԺԸ.

Խրիմեան Հայրիկ եւ ուսումնասիրութիւն՝ երկու անբաժան բաներ են, ընթերցող:

Առանց մի ուսումնարան մտնելու, նա այնքան է առաջացել իր մտաւոր զարգացման մէջ, որ այսօր համարւում է նա մեր առաջնակարգ հրապարակախօսներից, հեղինակներից ու մատենագիրներից մէկը: Եւ շատ բանի մէջ նա դեռ ամէնիցն էլ բարձր է:

Մեզ օրինակ նրա Վ ա ս պ ու ռ ա կ ա ն ի Ա ը ժ ու ի ն, Հ ը աւ ի ը ա կ Ա ը ա ը ա տ ե ա ն ը, Ե ը կ ի ը ն Աւետեացը, Խ ա չ ի ճ ա ու ը, Դ ը ա խ տ ի ը ն տ ա ն ի ը ը, Ս ի ը ա ը եւ Ս ա մ ու է լ ը, Մ ա ը գ ա ը ի տ ա ը ը ա յ ս լ թ ե ա ն ը, Վ ա ն գ ո յ ժ ն ու Հ ա յ գ յ ժ ը:

Այդ գրքերի ոճը թռթռուն է, գրաւիչ ու տպաւորիչ, որպէս Խրիմեան Հայրիկ, խրատող ու վերանորոգող, որպէս Աւետարան:

Նրանք մեծ սիրով են կարդացւում ամէն տեղ եւ միայն կարդացողները կարող են նրանց համն իմանալ: Տաճկաստանի ընտանիքներում մեծ ընդունելութիւն է գտել մանաւանդ Դ ը ա խ տ ի ը ն տ ա ն ի ը ը եւ մինչեւ այսօր էլ Վանքիք աղօթիկ պսակելիս՝ այդ գրքի մի օրինակը նրա օժիտի հետ փեսանց տունն են ուղարկում...

Եւ յիրաւի, ինչ այնքան թանկագին օժիտ քան մի «Դը-

րախտի ընտանիք»: Եւ քանի՜ սրտառուչ է նկարագրում այդ գիրքը մեր նորապսակներին՝ մի երկրաւոր դրախտի, բարեկազմ հայ ընտանիքի, բոլոր վայելչութիւնները...

Քառասուն տարի է, որ գրում է Խրիմեան եւ դեռ էլի չէ՛ ձգում նա այդ մարգարտաշար գրիչը իր ձեռքից:

Հայրիկը մեծ միտքարիչն է վարժապետների: Ուսուցչութիւնը առհասարակ ընկած է Տաճկաստանում եւ վարժապետները չեն զանազանւում շատ անգամ աղաների ծառայից: Հայրիկի պէս եկեղեցական միայն կարող է բարձրացնել նրանց գիրքը այդ տգէտ ժողովրդի առաջ: Եւ նա անում է այդ իր բոլոր կարողութեամբ: Նրա ներկայութեամբ այնքան հեշտ չէ խաղալ թշուառ վարժապետի պատուի հետ: Հայրիկը միշտ ամոքում է նրանց լքեալ սրտերը, այցելում է սիրով նրանց դասերին, խրախուսում ու օրհնում է նոցա: Եւ նրա օրհնութիւնը շատ կազդուրիչ է բեկեալ սրտերի համար:

Նա մասնաւոր ուշադրութիւն է դարձնում մանաւանդ օրիորդաց դպրոցների բարգաւաճման վրայ եւ շատ դժուարութեանց հանդիպում ամբոխի նախապաշարումը ջարդելիս:

Խրիմեանը առաջինն եղաւ որ 1856-ին տպարան հիմնեց Թիւրքիայի խորքերում, Վարազայ վանքում եւ որի մի մասը նա յետոյ ս. Վարապետ էլ տեղափոխեց: Այդ տպարանը եւ նրա հետ հիմնած գրադարանն ու «Ժառանգաւորաց դպրոցը» մինչեւ օրս էլ կանգուն են Վարազայ սարի վրայ:

Դժբաղդաբար Խրիմեանը չըգիտէ ոչ մի եւրոպական լեզու: Նա հմուտ է հայերէնին եւ գիտէ խօսել թիւրքերէն:

ԺԹ.

Առարձին ուշադրութեան արժանի է Խրիմեանի մասնաւոր կեանքը:

Վանում եղած ժամանակ, նա իր օրերի կէսը անց է կացնում Վարազդում: Պէտք է ասած, որ Տաճկաստանի վանքերի սովորական կերակուրները կաթնեղէն են միայն: Վան վանքեր, որոնց մէջ ամիսներով մնի համ չեն տեսնում: Այդպիսիներից մէկն է նաեւ Վարազը: Այդտեղ տարին երեք կամ չորս անգամ մի մի ոչխար են մորթում: Ուտիսին այդտեղի միաբանութեան միակ կերակուրն է թ ա ն ա պ ու ռ ը: Վաթի առատութեան ժամանակ երբեմն տրուում է նրանց նաեւ մածոն, կաթ ու սէր: Պասին նրանք ուտում են բակլայ, ֆասուկիա, թթուած կաղամբի ապուր եւ խաշած բանջարեղէններ: Բայց պասին ամէն օր կերակուր չէ եփւում եւ պէտք է լինում բաւականապէս մի միայն ցամաք հացով... Այդպէս են կերակրւում վանքի վարդապետներից սկսած մինչեւ յետին մշակն ու հովիւր: Այդպէս է կերակրւում միշտ նաեւ Խրիմեան Հայրիկը, այդ նախկին Պատրիարքն ու աշխարհահռչակ մարդը...

Բայց պէտք է ասել աւելին. Հայրիկը չէ ակորթում պատուան վնասակար կերակուրներից եւ նախադասում է ցամաք հացով միայն կշտանալ: Իսկ գալով ուտիսին — արդէն Հայրիկի համար չը կայ աշխարհի մէջ այնքան համեղ կերակուր, ինչպէս թ ա ն ա պ ու ռ ը: Եւ նրա ունեցած բարեկամութիւնը այդ թանապուրի հետ արդէն առածի կարգն է անցել ամէն տեղ, մանաւանդ այն օրից, երբ նա 1879 թուականին, Պատրիարքութիւնից հրաժարուելու առիթով, հրապարակապէս արտասանեց. «Գնա՛, Արծիւ՛. Վասպուրականի, քո սիրեցեալ Վարազը. անդ պատրաստ է թանապուր եւ գրիչ մը քո երկերիդ համար»...

Քաղաքում Հայրիկն ունի իր պապենական տունը, այն տեղը, ուր նա առաջին անգամ լոյս աշխարհ է տեսել եւ ուր այժմ բնակւում են նրա եղբորորդիքը իրենց ընտանիքներով*):

*) 2ը գիտեմ ի՞նչ տեղիցն են խմացել մեր Վովկասցի Հայերը

Այնտեղ էլ տիրապետում է վերին աստիճանի պարզութիւն ու սակաւապետութիւն:

Միեւնոյն ժամանակ նա շատ քչակեր է եւ հազուադէպ բան է, որ նրա հետ ճաշողները կարողանան նրա չափ ուտելով կշտանալ: Նոյն պարզութիւնը նա ցոյց է տալիս նաեւ խնձոյքներում: Նա չէ մերձենում բոլոր կերակուրներին եւ հաւանածներից մի մի պատառ է միայն վերցնում: Ստեղէն կերակուրների հետ նա թոյլ է աալիս իրեն ըմպել նաեւ գինի, բայց ոչ երբեք աւելի քան մէկ կամ երկու գաւաթ: Թանապուրից յետոյ նա սիրում է նոյնպէս թէյը եւ կանոնաւորապէս գործ է դնում օրն երկու անգամ, որ սովորական չէ Տաճկաստանում:

Ցերեկուան ազատ ժամերին նա զբաղւում է կարդալով ու գրելով: Մեծ արժէք է տալիս ուստահայ գրականութեան եւ մեր գրողներին դրական, խելացի ու ծանրակշիռ է անուանում: Ծրագի տակ երբեք չէ պարապւում եւ աւելի թիրում է գիշերները կանուխ պարկել ու աղօթքանին դարձնել: Բայց լաւ խօսակիցների համար նա չէ խնայում նաեւ գիշերային ժամեր:

Հայրիկը հազնում է էժանագին եւ ամենապարզ շորեր: Մինչեւ որ հագուստը խոնանալ չը սկսէ, նա նորը չի կտրել տայ, բայց բանն այն է, որ անթիւ կարօտեալները չեն թոյլ տալիս, որ նա մի քիչ մաշէ իր շորերը... Երբ նրա մօտ մի աղքատ, կտրտուած փարաջայով քահանայ մօնի, նա իսկոյն իր լայն փարաջան կը հագցնէ նրան: Այսպէս է լինում նրա

և նրանց հետ Գերմանացի պ. Արթուր Լայստը, թէ Հայրիկը Ալիւր գիւղում է ծնուած: Հայրիկենց տունը Վանում դարաւոր շինութիւն է. «Խրիմցենք» կամ «Արիմցենք» կոչուեցան նրա պապերը՝ իրենց առեւտրական գործերով յաճախ Խրիմ երթեկեկելու պատճառով:

բոլոր հագուստի հետ, սկսած փարաջից մինչեւ վերջին գուլբան... Եւ որչափ նա աշխատում է մի մի զոյգ աւելի հագուստ պահել—չէ լինում ու չէ լինում:...

Եւ մինչ նրա բարեկամները յոգնում են նրա համար շորեր կտրել տալով, նա ինքը չէ յոգնում ուրիշներին նուիրելով...

Հայրիկը լաւ ձիավար է: Կառք գործածելը ճաճկաստանում սովորական չէ եւ նա իր բոլոր ճանապարհորդութիւնները ձիով է կատարում:

Իբրեւ ընկեր, զրուցակից ու խօսակից—արդէն անմահ է Հայրիկը, ինչպէս ամէն ընթերցող էլ կարող է այդ մակարեքել:

Ի.

Խրիմեանը ոչ նուազ նշանակութիւն ունի Կոստանդնուպօլստում քան գաւառներում: Եթէ ռամկութիւնը գնահատում է նրա սիրտը, լուսաւորեալ դասը աւելի եւս յարգում է նրան՝ նրա մտաւոր զարգացման, իմաստութեան ու ազատամտութեան համար: Նոյն իսկ նրա ատենախօսութիւնն ու քարոզը մեծ արժէք ունի նրանց աչքում, թէեւ Բիւզանդիոնը արդէն ինքնըստինքեան ճարտարախօսութեան հայրենիքն է...

Եւ նա մեծ նշանակութիւն է ունեցել այնտեղ ոչ միայն իր պատրիարքութեան օրով, այլ ամէն ժամանակ, երբ նա ապրել է այնտեղ: Բաւական է որ նա Սեւ ծովից մտնէ Կ. Պօլսի նեղուցը,—արդէն Պօլսեցիք կիսով չափ պիտի մոռանան իրենց միւս եկեղեցականների գոյութիւնը: Եւ հին խօսք է թէ «Յերեւիլն արեգական կորնչին աստեղք»:

Առանց Հայրիկի ներկայութեան անհամ է անց կենում ամէն հանդէս, լինի այդ ուսումնական, հարսանեկան թէ եկեղեցական: Նա այդ բոլոր հանդէսների լուսաւորող ջահն է՝

իր վսեմ ու պատկառելի դէմքով, վեհմաստ մտքերով ու անմոռանալի խօսքերով:

Գաւառներում սով, հրդեհ եւ այլ դժբաղդ արկածներ են պատահում եւ պէտք է լինում ի մարդասիրութիւն հրաւիրել ամբողջ հայութիւնը: Եւ տիեզերական հրաւերը ուղարկում է ամէն տեղ, բայց ոչ Թիւրքիոյ Հայոց գլուխ—Պատրիարքից այլ մի անպաշտօն Խրիմեան Հայրիկից: Որովհետեւ նրա ձայնը աւելի ազդու, նրա անունը ամենավստահելին է:

Նրան շատ է սիրում մանաւանդ ուսեալ երիտասարդութիւնը եւ նրա դրդմամբ ու խրախոյսով շատ գրքեր ու գրութեանք են լոյս տեսնում այնտեղ: Նա միշտ մի ղեկավարող ու ոգեւորիչ սյոժ է եղել հասկացող ու ազնիւ պօլսեցիների համար:

Եւրոպային անծանօթ չէ Հայրիկի անունը եւ նա մեծ համարում ունի այնտեղ: 1878-ի ճամբորդութեան միջոցին նա այցելեց Վեննա, Հռոմ, Լոնդոն, Փարիզ ու Բերլին: Նա ամէն տեղ խիստ լաւ տպաւորութիւն թողեց իր լուրջ դատողութեամբ, հայրենասիրութեամբ ու վեհանձնութեամբ:

ԻԱ.

Այդ ամէնը, ընթերցող, ինչ որ լսեցիր այստեղ Խրիմեան Հայրիկի ժողովրդականութեան ու բնաւորութեան մասին,— ոչ հեքիաթ է եւ ոչ առասպել, այլ զուտ ճշմարտութիւն եւ մի միայն ճշմարտութիւն: Բերած փաստերիս ու տեղեկութիւններիս մեծ մասը տեսած եմ ի մ եր կ ու ա չ ք ո վ, իսկ փոքրամասնութիւնը՝ լսած ի մ եր կ ու ա կ ա ն ջ ո վ՝ ամենահաստատաւոր քաղաքներից: Այո, Խրիմեանը դարուս ամենաթողովրդական մարդերից մէկն է: Խրիմեանը միեւնոյն ժամանակ դարուս ամենամեծ հայրենասէրներից մէկն է: Այդ

բանին կը վկայէ ամէն մարդ, որ տեսել է նրան բուն ժողովրդի մէջ: Խրիմեան Հայրիկ եւ ժողովուրդ՝ այնպիսի մի բաղադրեալ զանգուած է, որը լուծելու, քակելու համար անգոր պիտի լինին աշխարհի բոլոր քիմիկոսները, իրենց հանձարով ու գործիքներով: Խրիմեան Հայրիկ՝ առանց ժողովրդի եւ ժողովուրդ՝ առանց Խրիմեան Հայրիկի—անհասկանալի է ինձ:

Ահա թէ ինչ էր ասում նա ինքը հաղաւաւոր վանքիների առաջ, վերջին անգամ Պօլիս գնալիս.— «Ժողովուրդ հայոց, էգուց հեռանում եմ այստեղից... Թողնում եմ սիրելի հայրենիքս, ինձ կեանք տուող ժողովուրդս եւ իմ անմահ Վարազս, որտեղ քսան եւ եօթ երկար տարիներումս ընդն էի շինել ինձ համար՝ իմ այս մատնեբովս... Բայց մի կարծիր, ժողովուրդ հայոց, թէ Խրիմեանը գնաց ու մոռացաւ ամէնքիդ... Այն օրից, երբ 1820 թուին Խրիմեանը մկրտուեցաւ այս սուրբ աւազանում (ցոյց տուեց ձեռքով իր մկրտուած տեղը), մի տախտակ շինուեցաւ նրա որտի վրայ ու «Ժողովուրդ» բառը գրուեցաւ... Բանի որ շունչս բերանումն է, ոչ ոք չէ կարող եղծել այդ բառը այնտեղից... Իսկ եւ մի եղծէք, ժողովուրդ հայոց, Հայրիկի անունը ձեր սրտից... Յիշեցէք ձեր աղօթքների մէջ Խրիմեան Հայրիկին... Խօսք եմ տալիս, ուր որ լինիմ՝ թէ Մասեաց ստորոտ եւ թէ Բիւզանդիոն՝ մէկ օր էլ չ'անցկացնել առանց իմ հայրենիքը յիշելու... Իսկ երբ Խրիմեանը աւանդէ իր հոգին օտարութեան մէջ,—նրա անբռնաբարելի կտակը պիտի լինի՝ իր ոսկերոտին Վասպուրական փոխադրել, Վարազայ խաչաքարերում, իր հայրենիքի ծոցում, ամփոփել»...

ԻԲ.

Խօսքս վերջացնելուց առաջ թոյլ տուր ինձ, ընթերցող, պատմել քեզ եւ մի երազ, որ տեսել եմ Վանում ճիշտ սրանից երեք ու կէս տարի առաջ:

Մի երեկոյ Հայրիկի հետ միասին Վարազից իջանք քաղաք ու մտանք իրենց տուն: Չայ խմեցինք եւ ես պատրաստւում էի դուրս գնալ, այցելել իմ բարեկամներին: Բայց անձրեան սկսեց եւ ես մտածեցի որ Հայրիկը կարող է հիւրեր չունենալ ու ձանձրանալ մենակութիւնից: Մնացի:

Սօս երեք ժամ երկար երկար խօսում էինք Տաճկահայոց գործերի եւ այլ նիւթերի վրայ: Հայրիկը իր մտերիմների հետ փոքր ինչ աւելի է բացւում եւ ես զմայլում էի նրա զատողութիւնների ու տենչերի վրայ: Վերջապէս ընթերցեցինք ու պառկեցանք, դիմացէ դիմաց դրուած երկու մահճակալների վրայ: Նրա առանձնասենեակում մէկ մահճակալ աւելի է պահւում Վարազայ միաբանների եւ ուսուցիչների համար, բայց երբ դրանց թիւը շատ է լինում, մի մասը յատակի վրայ են տեղաւորում: Ի հարկէ, երբ Հայրիկը բացակայ լինի այնտեղից, նրա մահճակալն էլ ընդհանուրի սեպակաւանութիւն է...

Երկար ժամանակ մի կողքից միւսի վրայ ընկնելով, չարչարում էի: Անկերջ մտածումներս Խրիմեանի անցեալի, ներկայի եւ ապագայի մասին չէին թողնում աչքս կայցնել: Երբեմն լսում էի դրան ճրոճընոց, նրա բաց ու խուսի անելը, բայց այդ այլեւս իմ ուշադրութիւնս չէր գրաւում. տան կատուն միշտ ազատ էր այնտեղ ելումուտ անելու: Բայց յիշում եմ, երբ նոր գնացած ժամանակս այդպիսի մի ճրոճընոց էր լսում, մազերս փշաքաղում էին ու սարսուռ անցնում մարմնիս մէջ,— «Տէր Աստուած, մտածում էի ես, ինչ պէտք է անենք որ մի գող, մի աւազակ մտնի ու ձեռք տայ այդ ամենաթանկագին անձնաւորութեան, մի ամբողջ աշխարհի Հայ-

րիկին. ի՞նչ անխելքութիւն է տան դուռը բաց թողնել ու քնել, երբ այդ սենեակը բոլորովին առանձնացած է միաներկից: Բայց ես շուտով հասկացայ, որ անխելքն ես եմ եւ վաթսուն տարուց աւել, ուր որ Խրիմեանը գլուխը բարձի վրայ է դրել, երբեք մտքովը չէ անցուցել, թէ մէկը կը դիպչի իրեն...

Վերջապէս, չը գիտեմ ինչպէս եղաւ, որ բռնա տարել էր: Վաճառ մէջ ամբողջ մի ամիս հիւանդ պառկած էի: Մի սեւ կրծքացաւ մահուան դուռն էր ձգել ինձ, ուժիցս բոլորովին ընկել էի: Արեան սակաւութիւնից աչքիս լոյսը գրեթէ կորել էր եւ անկարող էի մի բան կարդալ: Վերջին շաբաթ ցաւ սաստկացել էր եւ բժիշկն արգելած էր հիւրերիս յաճախակի երթեւեկութիւնը: Հայրիկն օտարութեան մէջ էր: Բարեկամներս ասում էին, թէ նա յաճախ բարեւներ է ուղարկում ինձ ու ցաւում տխրութեանս համար: Մի անգամ էլ մի նամակ դրին ձեռքս, իբր թէ Հայրիկից, ինձ ուղարկուած: Ես կարդալ չէի կարող, բովանդակութիւնը պատմեցին ինձ ուրիշները եւ ես նամակը երկար ժամանակ ձեռքիս մէջ ճիւղելով, դրի բարձիս տակ:

Առաւօտ էր: Ինձ տիրել էր մի անախորժ թմրութիւն եւ չէի կարողանում աչքերս բանալ: Շատ կարելի է զառանցանքի մէջն էի:

Բայց գլուխս բարձի վրայ չէր մնում, կարծես մոլորածով ծեծում էին նրան: Շարունակ գլուխս վեր բարձրացնում, էլի յետ էի գցում ու յանկարծ անկողնիս մէջ նստում:

— Ի՞նչ է, բալաս, ի՞նչու հանգիստ չես պարկում... —

— Այս ի՞նչ է, — ասացի ես բացի ձայնով այդ պառաւին — տանիքի վրայ, սենեակի տակ, փողոցում՝ ահագին դժգոհոյք են հանում. — տո՛ւնս են ուզում քանդել թէ պատե՛րազմ է, քրդերն եկել են մեզ կողոպտելու... —

Պառաւը պատասխան չը տուեց: Երեսո շուռ տուի գէ-

պի նա ու աչքերս բորբոքուեցան բարկութիւնից: Եւ ի՞նչ եմ տեսնում... պառաւը սոսկալի կերպով լաց է լինում...

— Պառկիր, մեռնեմ ջանիդ, բան չը կայ, քեզ է էդ պէս երեւում... —

Անպիտանը այնպիսի մի կարեկցութեամբ արտասանեց այդ բառերը, որ ես հաւատացի ու յետ ընկայ բարձիս վրայ յուսահատ, անիծելով իմ սեւ օրերը:

Ելի՛ ձայներ, դղրդիւն, ձիաների խրինջիւն, ոստիկանների գոռում — գոչիւն, տանիքի վրայ կանանց վրլվրոց... «Զէ, ես այդքան յիմար չեմ», — մտածեցի ես ու սկսեցի ուշադրութիւնս լարել... Տը՛ նկ, տը՛ նկ, տը՛ նկ... լսում եմ մի քանի եկեղեցիների զանկերի ծանր, մեղամաղձոտ ղօղանջիւնը, այդ մեռելի համար է, պառաւս ինձ խաբել չէ կարող:

Նորէն նստայ անկողնիս մէջ:

— Թառիկ խաթուն, — ասացի ես պառաւին, — այս րոպէիս Կարապետ վարժապետին պիտի գտնես, բերեմ այստես...

Նա սկսեց կմկմալ: — Շուտ — պոռացի ես: — Նա էլի նայում էր ինձ տատանման մէջ: — Շուտ — ճրջացի ես սարսափելի կերպով ու նա դուրս գնաց արտասուելով:

Տաս րոպէից յետոյ եկաւ ուզած մարդս: Ըստ երեւութին, նա շատ անհանգիստ էր երեւում: Երկար ու բարակ օյինբազումութիւններից յետոյ, նա ստիպուեցաւ վերջապէս արտասանել.

— Հայ... րի... կր...

— Աստուած տունդ չը քանդի, ճրջացի ես ու ընկայ արծծի պէս բարձիս վրայ:

Ել չեմ իմանում ինչ պատահեցաւ ինձ, բայց երբ աչքս բացի, ահագին բազմութիւն գտայ սենեակիս մէջ եւ բժիշկը համրում էր երակիս զարկերը: Երեւում էր, որ ես ուշաթափ էի եղած: Պահանջեցի անպատճառ հաղորդել ինձ բոլոր եղելութիւնը: Բժիշկը խոստում առեց ինձանից՝ լսել ամէն բան

կատարեալ անտարբերութեամբ:

Գործից երեւեցաւ, որ դժբաղդութիւնը պատահած էր երկու շաբաթ առաջ, օտարութեան մէջ եւ կտակի համաձայն «ոսկերոտին» Վարազ պիտի տանուէր: Դիակը եկեղեցուց դուրս էին բերել եւ մեծ հանդէսով Վարազ էին տեղափոխում:

— Իսկոյն ձիս պատրաստեցէք—հրամայեցի ես:

Ընդիմութիւն, աղաչանք, պաղատանք—անկարելի եղաւ: Բժիշկին համաձայնեցաւ եւ ես ձի հեծայ շրջապատուած իմ ընկեր—թիկնապահներով:

Տէր Աստուած, փողոցներում ասեղ ձգելու տեղ չը կայ, բոլոր տանիքները ծածկուել են հազարաւոր կանանց ու երեխաների տակ. ձիաւորներ, կառքեր, թիւրք ոստիկաններ, աստիճանաւորներ, սպաներ—ամբողջ աշխարհն այնտեղ է: Սեւ հագուստ, թախիժով խեղդուած դէմքեր, աղիոզորմ հեծկըլտանք—տեսնուում ու լսուում են ամէն տեղ: Դուրս եկանք փողոցներից դէպի դաշտ: Աստուած իմ, դեռ նոր եմ տեսնում, որ ճիշտ ամբողջ աշխարհն այնտեղ է. էլ դաշտ, էլ արտ, էլ բլուր, էլ Վարազայ սարի լայնաշղթայ—ամէն տեղ մարդիկ ու մարդոց գլխներ. մի ոտաչափ դատարկ տեղ չը կայ:

Վերջապէս, հազար վայ ու վազլախով հասանք Վարազայ խաչաքարերին: Ի յարգանս իմ մասնաւոր դրութեան, ինձ տեղ տուին դամբարանի մօտ: Դիակը ցինկի դագաղի մէջն էր եւ ես չէի կարող հանգուցեալի դէմքը տեսնել: Երկար արարողութիւններից յետոյ մի քանի վարդապետներ ու եպիսկոպոսներ դամբանականներ խօսեցին: Նախապարհի անհանգստութիւնից ես գրեթէ ոչինչ չէի լսում, ականջներս խլացել էին: Շուտ էի գալիս երբեմն դէպի ծով—Ժողովուրդը եւ ի՞նչ տեսնում. ծածկաստանի եւ Ռուսաստանի ամէն կողմերից յուղարկաւորներ ու շքեղ հագնուած պատգամաւորներ,

որոնց բերած պնակները երկու արշին բարձրութիւն էին կազմել ցինկի դագաղի վրայ:

Ամէնից վերջ մի բարձր տեղից ծառ էր կարգում մի կովկասցի կրակոտ երիտասարդ: Նրա դէմքը ինձ ծանօթ էր երեւում, բայց լաւ չէի յիշում թէ ո՞վ էր դա: Երեւում էր, որ նա շատ ազգու էր խօսում, որովհետեւ նրա խօսած ժամանակ բոլոր Ժողովուրդը հինգ տարեկան տղայի պէս մարմնում ու հեկեկում էր: Բրդի շորը յետ քաշեցի ականջներիցս ու բոլոր ուժովս աշխատեցի քանի մի բառ լսել: Ինձ յարողեցաւ միայն այսչափն հասկանալ թէ «Խրիմեան Հայրիկը կենդանի ապացոյց է, թէ Գրիգոր Լուսաւորիչն, Մեծն Ներսէսը, Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւն ու Ներսէս Առաքանիկացին երեւակայեալ անձնաւորութիւններ չեն, այլ հայ ազգի հարազատ ու բնական որդիք»... «Բայց դժբաղդաբար շատ տաանեակ տարիներ ու դարեր են պէտք լինում, որ Խրիմեաններ առաջ գան»... «Ո՛հ հայ կին, ի՞նչու չես պարծենում աշխարհի առաջ, որ քո օրհնեալ արգանդից Հայրիկներ ես դուրս հանում»...

Դեռ էլի շատ բաներ ասաց կրակոտ երիտասարդը, բայց ես չը կարողացայ լսել կամ լաւ միտս պահել: Գլուխս կախեցի ու խորասուզուեցայ մտքերիս մէջ: Կարծես այն ամէնը, ինչ որ կատարւում էր իմ շուրջս, այլեւս չէր թափեցնում ինձ: Յանկարծ մի ահադին գոռոււն—գոչիւն, յուսահատ ճիւղեր ստիպեցին ինձ գլուխս վեր բարձրացնել... «Ա՛խ, անգութներ, դագաղը փոսն են իջեցնում»—արտասանեցի ես ու ընկայ ուշաթափ՝ ընկերներիս բազուկների վրայ:

Չը գիտեմ էլի գուռն էր ճռռճռուացել թէ կատուն էր երեսոս չանգրտել—բայց ես յանկարծ զարթեցայ: Մօտ մէկ րոպէ ես էլի սպանուած էի իմ վշտերով ու կարծում էի ինձ Վարազայ խաչաքարերում... Բայց քիչ քիչ աչքերս բացի, չորս կողմն նայեցի եւ, ո՞վ ապշութիւն, ես Հայրիկի տունն եմ եւ

ահա նա ինքն էլ իր խաղաղ, անմեղ քնի մէջ...

Անկողնիցս իջայ ու մօտեցայ մահճակալին... Սարսուռ անցաւ մարմնիս մէջ ու յիշեցի մի անխթարթում Վիկտոր Հիւգօյի գող ժամը—Վալտանին, որ գնացել էր դիտելու քնած «Բիէնսիլին»-ին։ Այստեղ էլ լուսինը լուսաւորում էր մեր մեծ «Բիէնսիլին»-ի հեղ դէմքը եւ ես զմայլում ու ուրախութեամբ լսում էի նրա շնչառութիւնը...

Երեսիս խաչ հանեցի, փառք տուի Աստծուն ու նորէն պառկեցայ իմ տեղ։

ԻԳ.

Ելի հանգիստ չը մնացի ես, էլի խառն ի խռռն երազներ ման էին ածում ինձ անորոշ անգիտի ու անորոշ ժամանակների մէջ։

—Ահա ես անց եմ կենում մի փողոցով։ Ի՞նչ փողոց է եւ որ քաղաքում—չեմ կարող որոշել։ Յանկարծ կանգնեցայ մէկ մեծ արձանի առաջ. դա ներկայացնում էր Վասպուրականի տարազով հագնուած մի գեղեցիկ երիտասարդին, մի կապ թել ու մըքուքներ բռնած ձեռքում։

—Այս որտեղ ենք մենք,—հարցուցի ընկերոջս։

—Վանում, սա Հայրիկենց թաղն է...

—Իսկ այս արձանն ի՞նչ է...

—Դա ներկայացնում է Խրիմեանին երիտասարդ հասակում, երբ նա մեր հմուտ կ'տաւ ազդեցիկ մէկին էր։ Այդ արձանը կանգնեցին քսան տարի առաջ Վանցի կտաւագործները։ Ասում են, որ ճիշտ այստեղ նա թել էր պատրաստում իր գործելիք կտաւի համար։

—Ես էլ մի ժամանակ Վան եմ եղած,—ասացի ես ընկերոջս—բայց ինքը Խրիմեանը ինձ պատմում էր, թէ նա թելերը իրենց տան առաջն էր պատրաստում...

—Դէ՛ այս էլ իր տունն է էլի—ցոյց տուեց նա ձեռքով երկու քայլ հեռու գտնուող շինութեւնը։

Ես իսկոյն ճանաչեցի այդ տունը եւ շատ զարմացայ, որ մինչ Վանայ բոլոր տները փոխուել ու շքեղացել էին, նա նորէն մնում էր իր հին վիճակի մէջ։ Այժս ընկաւ յանկարծ տան գլխին կպած մի խոշոր վերտառութիւն, ոսկի գրերով։ Այժս լաւ չէր կտրում բաւականին ծերացել էի։ Ակնոցս հանեցի ու կարդացի. «19-դ դարու մեծ հայրենասէր Խրիմեան Հայրիկի ծննդավայր»։

—Ահա անցնում եմ մի ուրիշ կողմ, կանգնում եմ Վանայ Առաջնորդարանի առաջ։ Տեսնում եմ մի վիթխարի եպիսկոպոսի արձան... Օ՛հ, այս Խրիմեան Հայրիկն է, նրա պատկերը ես չեմ կարող մոռանալ։ Արձանի պատուանդանի վրայ գրուած էր. «Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, վեհմասն Առաջնորդ Վասպուրականի եւ Հայրիկ հայրենեաց»։

Ահա Վարագուան եմ։ Յոյց են տալիս ինձ նրա խաչաքարերում մի պարզ ու վսեմ արձան։ Երեք քերթէներ դիպցնում են արձանին իրենց թեւերը։ Արձանի տակ գրուած է. «Աստ հանգչի անձնուէր Վանահայր եւ վերանորոգիչ եղբայրանոցին Վարագայ՝ Մկրտիչ վարդ. Խրիմեան»։ Քերթէների թիւերի վրայ կարդում եմ. «Ժողովուրդ, Հայրենիք, Իմաստութիւն»։

—Ահա մի մեծ ծովի առաջն եմ։ Մի անգ փողոցում տեսնում եմ մի արձան. նա ներկայացնում է մի երիտասարդ կօշկարին, ձեռքում բռնած իր գործիքները։

—Ո՛ւր ենք այս,—հարցնում եմ ուղեկցիս։

—Կ. Պօլիս։ Այս արձանը ներկայացնում է մեր նախկին Պատրիարք Խրիմեան եպիսկոպոսին իր կօշկար եղած ժամանակ։ Նա առաջ այստեղ երկու տարի կօշկարարութիւն է արել։ Արձանը շինել են տուել մեր կօշկակարները։ Պատուաւորանի վրայ գրոշմուած էր. «Պօլոյ կօշկակարներից—իրենց արհեստակից Խրիմեանին»։

— Ահա ինձ տարան հայոց Պատրիարքարանի առաջ...
Օհ, այս ինչ հիանալի արձաններ են... երկուսն էլ ճանա-
չում եմ, արժէք դրանց այդպէս դիմացէ դիմաց կանգնեց-
նել: Մէկի պատուանդանի վրայ. «Հանճարեղ հովիւ — Ներ-
սէս Պատրիարք Վարժապետեան», միւսի՝ «Մարդասէր եւ հայ-
րենասէր Պատրիարք հայոց — Խրիմեան Մկրտիչ, «Հայրիկ»
վերաձայնեալ»:

Լաւ չեմ յիշում թէ էլի ինչ աշխարհներ անցայ, բայց
այդ արձաններին թիւ ու սահման չը կար: Նրանց տեսնե-
լիս, շփում էի սպիտակ մօրուքս, խորատուզում հին մտքերիս
մէջ ու դուրս բերում նախկին, մաշուած տալաւորութիւններս:

Թերեւս դեռ շատ պիտի մտածէի, եթէ մի ձայն չը զար-
թեցնէր ինձ: Աչքերս բացի ու տեսայ իմ վաղածանօթ մի
տիկնոջ. Հայրիկի եղբօրորդու ամուսինն էր այդ:

— Ել, պ. Փրոմեանց, ել... Սա խօ վարագ չէ, որ
այդքան քնանաս...

Գլուխս ուղղեցի դէպի ձայն եկած կողմ ու տեսայ... իմ
սիրելի Հայրիկին:

Մի ոգեւորուած ժպիտով դիտեցի նրա դէմքն ու երեսս
խաչակնքեցի:

Մի վախեցիր, ընթերցող, դու միայն յաջողութիւն մազ-
թիր Խրիմեանին: Նա այսօր, իր վաթսուն ու եօթ տարեկան
հասակում, դեռ էլի մի կայտառ, ժիր ու առողջ երիտասարդ է:



Փրիմի, 24 հուլիս. 1887 թ.

55

4617

2013

55

<< Ազգային գրադարան



NL0031477

